27 ՄԱՐՏ 2012 ԵՐԵՔՇԱԲԹԻ 54(4906)

# Ազգ
Azg

ISSN: 1829-1651

## Նալբանդյան. Եթե մինչեւ այսօր չի հաջողվել բեկում արձանագրել... ապա կողմերից մեկի ապակառուցողական դիրքորոշման պատճառով

«Մինսկի խմբի համանախագահությունն՝ ի դեմս Ռուսաստանի, Միացյալ Նահանգների եւ Ֆրանսիայի, միջազգային հանրության կողմից համապատասխան մանդատ ունեցող ղարաբաղյան հիմնախնդրով զբաղվող միջնորդական միակ կառույցն է», Մինսկի գործընթացի քսանամյակի կապակցությամբ տարածած հայտարարության մեջ նշել է Հայաստանի ԱԳ նախարար **Էդվարդ Նալբանդյանը**:

20 տարի առաջ մարտի 24-ին Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության խորհրդակցության արտգործնախարարների խորհրդի որոշմամբ սկիզբ դրվեց ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման Մինսկի գործընթացին, ձեւավորվեցին Մինսկի խումբը եւ նրա համանախագահությունը, որի առաքելությունն է բանակցությունների միջոցով՝ միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների հիման վրա, հասնել հիմնախնդրի խաղաղ կարգավորմանը:

Նալբանդյանը հայտարարությամբ ընդգծել է Մինսկի խմբի համանախագահների կարեւոր ներդրումները «զինադադարի պահպանման, հակամարտության գոտում լարվածության թուլացման, կողմերի միջեւ բանակցությունների շարունակման եւ հիմնախնդրի խաղաղ կարգավորման սկզբունքների մշակման գործում», շեշտելով նաեւ հրադադարի պահպանման գործում ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի կարեւոր դերակատարությունը:

Եռանախագահների ջանքերի շնորհիվ է, ըստ Նալբանդյանի, մշակվել հիմնախնդրի կարգավորման հիմք սկզբունքների եւ տարրերի ամբողջությունը: Հիշեցնելով նաեւ ԱՄՆ եւ Ֆրանսիայի նախագահների կողմից լիակատար աջակցություն վայելող Ռուսաստանի նախագահի հետեւողական ջանքերը՝ հիմնարար սկզբունքների վերաբերյալ կողմերի դիրքորոշումների մոտեցման ուղղությամբ, Նալբանդյանը գտնում է, որ դրանք որոշակի արդյունք տվեցին:

«Չնայած միջազգային հանրության ակնկալիքներին եւ Հայաստանի կառուցողական դիրքորոշմանը, նախագահ Մեդվեդեւի նախաձեռնությամբ Կազանում կազմակերպված հանդիպումը բեկումնային չեղավ», ասվում է հայտարարությամբ՝ հետեւյալ պարզաբանմամբ. «Եթե մինչ այսօր չի հաջողվել բեկում արձանագրել հիմնախնդրի կարգավորման գործընթացում, ապա ոչ այն պատճառով, որ համանախագահների կողմից այդ ուղղությամբ պակաս ջանքեր են գործադրվել, այլ կողմերից մեկի ապակառուցողական դիրքորոշման պատճառով, որը հաջորդաբար մերժում է համանախագահների առաջարկները, որը չի հրաժարվում հիմնահարցը ուժի կիրառմամբ լուծելու պատրանքից, չի ցանկանում ուղիղ բանակցել հակամարտության բուն կողմի՝ Լեռնային Ղարաբաղի հետ»:

Նալբանդյանը հայտարարությունը եզրափակել է նախ բարձր գնահատելով Մինսկի խմբի համանախագահող երկրների՝ Ռուսաստանի, Միացյալ Նահանգների եւ Ֆրանսիայի շարունակական եւ հետեւողական ջանքերը, ապա համոզվածություն հայտնել, որ հենց Մինսկի խմբի «ձեւաչափով իրականացվող միջնորդական ջանքերի շնորհիվ հնարավոր կլինի հասնել ղարաբաղյան հիմնախնդրի հանգուցալուծմանը»:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## Չկողմնորոշվածները կվճռեն ամեն ինչ

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ



Սոցհարցումներով միմյանց դեմ պայքարելու սեզոնն սկսվեց՝ կուսակցությունները սկսեցին միմյանց դեմ թվեր պատվիրել ու շխկացնել: Սոցհարցումների մի խմբում ԲՀԿ-ն է մի քիչ ավելի ձայներ ստանալու ՀՀԿ-ից, մյուսում՝ ՀՀԿ-ն՝ ԲՀԿ-ից, եւ այդպես շարունակ՝ նայած ո՞վ է սոցհարցման դրդիչը: Բայց մի բանում համաձայն ենք սոցիոլոգ Ահարոն Ադիբեկյանի հետ, այս անգամ չկողմնորոշվածները շատ են, եւ նրանք են վճռելու. մի պարզ պատճառով՝ հիմնական ֆավորիտներն արդեն իշխանություն են եղել, այն էլ բավական տեւական ժամանակ, ու նա, ով դժգոհ է իր ապրելակերպից, բայց ավանդաբար ընդդիմությանը չի ընտրում, հիմա շփոթված է, թե ո՞ւմ է ձայն տալու: Շատերն են այդ հարցը լսում ամեն օր՝ փողոցում, տրանսպորտում, աշխատավայրում, հարեւան-բարեկամներից. «Ո՞ւմ ընտրենք, որ մեր կյանքը փոխվի», տարակուսում են մարդիկ, ու այստեղ ոչինչ չեն կարող անել երեք կոալիցիոն ուժերի կարգախոսները, որոնցում տարբեր ձեւերով «հավատալ» բառն օգտագործված է, հավատը աննյութական բան է, ընդամենը բառ է, իսկ բոլորիս կյանքն աչքն ի տես է:

Ահա այդ չկողմնորոշվածները, որ սոցիոլոգիական տվյալներով ընտրությանը հնարավոր մասնակից ընտրողի 60 տոկոսի բավական զգալի՝ մեկ երրորդ հատվածն են կազմում, վճռելու են մեր ապագա խորհրդարանի, այդ թվում նաեւ երկրի ճակատագիրը: Ու ամեն ինչ կախված կլինի նրանից, թե այդ չկողմնորոշվածներին ո՞վ ավելի լավ կխաբի. չկողմնորոշվածներին գրավելու համար կոալիցիոն կուսակցությունները պայքարելու են իրար դեմ՝ իրարից ընտրող փախցնելով, բայց նույնն են անելու նաեւ ընդդիմադիր կուսակցությունները, քանի որ ընդդիմադիր հատվածի ձայները միայնակ տիրապետելու հավակնություններ ունեցող ՀԱԿ-ը այդ հնարավորությունը վաղուց է կորցրել: «Ժառանգությունն» ու Դաշնակցությունը, իրենց սովորական ընտրազանգվածին խառնել-կիսելու են նաեւ ՀԱԿ-ի նախկին ընտրազանգվածի որոշակի ձայները:

Տես էջ 3

## Մայր քաղաքի նոր ավտոբուսները շնորհավոր

*Նաեւ փոքրիկ հույսով, որ մի օր մյուս քաղաքների մասին էլ կմտածեն*



ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ
Գյումրի

Ամեն անգամ, երբ Երեւանի քաղաքային տրանսպորտը համալրվում է նոր ավտոբուսներով, դրանց նոր խմբաքանակով, մայրաքաղաքի բնակիչ չլինելով էլ ուրախանում ես: Մեր մայրաքաղաքն է, ուրեմն նրա ամեն լավը նաեւ մեր սիրո ու հպարտության առարկան է: Ավտոբուսների պարագայում ուրախանում ես մեկ նրա համար, որ միկրոավտոբուսների տիրապետության ստեղծած քաոսն ու անհարմարությունները նվազեցնելու մի քայլ արվեց, երկրորդ՝ որ մենք էլ մեկ-մեկ առիթ կունենանք գործով Երեւան եկած ժամանակ օգտվելու դրանցից ու մի քիչ էլ մեզ մարդ զգալու: Եվ երրորդ, մի պահ արթնացած թո՜ւյլ հույսով մտածում ես, թե միգուցե մայրաքաղաքում հասարակական տրանսպորտի խնդիրը քիչ թե շատ լուծելուց հետո մեր ղեկավարներն այդ փորձի հիման վրա ու ինչ-որ չափով դրա օրինակով՝ մտածեն հանրապետության նաեւ մյուս համեմատաբար մեծ քաղաքների համանման, չափերի առումով՝ շատ ավելի հեշտ լուծելի խնդրի մասին:

Մոտավորապես մի երկու-երեք տարի առաջ մի անգամ Գյումրու Անկախության հրապարակի մոտով անցնելիս անակնկալ համակած զարմանք ապրեցի մի անսովոր ու դրանով տարօրինակ տեսարանից, որը առաջին պահ չհասկացա՝ այս քաղաքի տրանսպորտային տխուր համապատկերին նետված հրա՞շք էր, տեսողական խաբկա՞նք էր, թե՞ արթմնի երազ...

Տես էջ 2

## Մինսկի խմբի «վիթխարի աշխատանքը»՝ խաղաղության պահպանման համար

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը երախտագիտություն է հայտնել Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծման ուղղությամբ անցած քսան տարիներին համանախագահող երկրների եւ անձամբ այդ երկրների նախագահների ձեռնարկած հետեւողական ջանքերի համար:

Պաշտոնական հաղորդագրության համաձայն, երեկ Սարգսյանը շնորհավորական ուղերձ է հղել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների ղեկավարներին՝ Ռուսաստանի Դաշնության նախագահ Դմիտրի Մեդվեդեւին, ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբամային եւ Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիին՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման Մինսկի գործընթացի 20-ամյակի կապակցությամբ:

Թեեւ Մինսկի գործընթացի գլխավոր նպատակը՝ հիմնախնդրի կարգավորումը, դեռեւս մնում է չիրագործված, Սերժ Սարգսյանը նշել է, որ, այդուհանդերձ, անհնարին է գերագնահատել այն վիթխարի աշխատանքը, որ անցած քսան տարիներին իրականացվել է Մինսկի խմբի համանախագահության կողմից՝ «կողմերի դիրքորոշումների մոտեցման, հիմնարար սկզբունքների մշակման, լարվածության լիցքաթափման եւ խաղաղության պահպանման համար»:

Ա. Հ.

Հ.Գ. Ադրբեջանում առայժմ նախընտրում են լռությունը, թեեւ ոչ երկրի նախագահը, ոչ էլ արտգործնախարարը երբեւէ հրապարակայնորեն դժգոհություն չեն արտահայտել ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունեության առնչությամբ:

## Սիրիայում փակվեց Թուրքիայի դեսպանատունը

Թուրքիայի իշխանությունները հայտարարել են Դամասկոսում իրենց դեսպանատան փակման մասին: Դիվանագիտական անանուն աղբյուրներ վկայակոչելով, Ֆրանսպրեսը հաղորդում է, որ դեսպանատան աշխատանքը դադարեցվել է մարտի 26-ի առավոտյան: Փակման պատճառը, ըստ նույն աղբյուրի, Սիրիայի լարված իրադրությունն է:

Դեռ մարտի 16-ին վարչապետ Էրդողանը թուրքահպատակներին կոչ էր արել հնարավորինս շուտ հեռանալ Սիրիայից: Նույն օրը նա արտահայտել էր թուրք-սիրիական սահմանում «բուֆերային գոտի» ստեղծելու գաղափար: Ըստ նրա մտահղացման, այնտեղ կարող են թաքնվել Բաշար Ասադի վարչակարգի հալածանքներից Թուրքիա փախչող սիրիացիները:

Ռոյթեր գործակալության տվյալներով, մինչեւ օրս սահմանը հատել են մոտ 17 հազար սիրիացի փախստականներ:

Միաժամանակ հաղորդվում է, որ Անկարան նախընտրում է չփակել Սիրիայի հյուսիսում՝ Հալեպում գտնվող թուրքական հյուպատոսությունը:

Ավելի վաղ Դամասկոսում իրենց դեսպանատները փակել էին ԵՄ մի քանի երկրներ, ԱՄՆ-ը, Պարսից ծոցի արաբական միապետությունները, ինչպես նաեւ Ճապոնիան:

## Ադրբեջանը «սողք է տալիս»

**Մեկ-երկու շաբաթ առաջ սողանքի պատճառով տարհանվել են Բաքվի մի շարք բազմաբնակարան շենքերի բնակիչներ: Սողանքային երեւույթներ են արձանագրվել նաեւ Ապշերոնյան թերակղզու գյուղական բնակավայրերում: Մասնագետները դժվարանում են տալ երեւույթի բացատրությունը: Դրանից, ինչ խոսք, ոչինչ չի փոխվում. հարկ է մարդկանց ապահովել նոր բնակարաններով եւ առանձնատներով, ինչպես նաեւ վերանայել քաղաքաշինական բազմաթիվ նախագծեր:**

**Բայց մինչ պետական մարմինները կմտածեին Բաքվում եւ հարակից ավաններում ու գյուղերում իրավիճակը կանոնավորելու մասին, Ադրբեջանի այլ տարածաշրջաններում նույնպես սողանքային երեւույթներ են արձանագրվել: Դրանցից ամենավտանգավորը Բաքու-Շամախի-Աղսու-Եվլախ ավտոճանապարհի ու հարակից բնակավայրերի հատվածում է: Փլուզման վտանգի տակ է հայտնվել մայրուղու՝ Աղսուի լեռնանցքը: Եթե սողքը, որի աղեղը շուրջ 3-500 մետր է, շարունակվի, ապա բացառված չէ, որ կարեւոր նշանակության ավտոմայրուղին կփակվի՝ դրանից բխող բոլոր հետեւանքներով հանդերձ:**

**Ըստ տեղեկությունների, Շամախիի շրջանում մի քանի տասնյակ գյուղական առանձնատներ արդեն իսկ բնակության համար անպիտանի են, եւ մարդիկ դրանցից տարհանվում են անվտանգ վայրեր: Բնապահպաններն ահազանգ են հնչեցնում, որ «ժամ առ ժամ բարձրանում է Կուր գետի մակարդակը»: Նախանցյալ տարի հեղեղումների հետեւանքով հազարավոր հեկտար հողատարածքներ եւ հարյուրավոր առանձնատներ հայտնվել էին ջրի տակ: «Այսօր իրավիճակն ավելի սպառնալի է, քանի որ ձմռանը տեղումներն առատ էին»,- ասում են ադրբեջանական աղբյուրները եւ կանխատեսում, որ գարնանային ձնհալն անկասկած նոր հեղեղումների պատճառ է դառնալու այն շրջաններում, որտեղով անցնում է Կուր գետը:**

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# 7-րդում ասպարեզը մնաց Նիկոլ Փաշինյանին, Սամվել Ալեքսանյանին եւ ...





«Ես որոշել եմ իմ թեկնածությունը հանել 7-րդ ընտրատարածքից եւ մաղթում եմ ամենայն բարիք եւ հաջողություններ իշխանական եւ ընդդիմադիր բոլոր թեկնածուներին», այսպես սկսեց իր ասուլիսը «Ժառանգություն» կուսակցության առաջնորդ **Րաֆֆի Հովհաննիսյանը**: Հիշեցնենք, որ նախորդ շաբաթ թիվ 7 ընտրատարածքում մեծամասնականով իր թեկնածությունն էր առաջադրել նաեւ Հովհաննիսյանը՝ ընդդեմ Հայ ազգային կոնգրեսի ներկայացուցիչ Նիկոլ Փաշինյանի եւ Հանրապետական կուսակցության թեկնածու Սամվել Ալեքսանյանի: Հովհաննիսյանը շաբաթավերջում հայտարարեց, որ եթե Նիկոլ Փաշինյանը համաձայնի, ապա ինքը պատրաստ է հրաժարվել մեծամասնական ձեւաչափով ընտրապայքարից: Երեկ Հովհաննիսյանը հայտարարեց, որ ինքնաբացարկ է հայտնում: Հովհաննիսյանը հայտարարեց, որ «Ժառանգության» ներկայացուցիչը հանդիպել է ՀԱԿ ներկայացուցչին՝ միասնական ճակատով պայքարելու առաջարկությամբ: «Ժառանգության» ներկայացուցիչն առաջարկել է, որ 21-րդ ընտրատարածքում բոլորը միասին պայքարեն ՀԱԿ-ի համար, իսկ 7-րդ ընտրատարածքում «Ժառանգության» համար: Մնացյալ ընտրատարածքներում՝ կամ «Դաշնակցության», կամ հասարակական սեկտորի ներկայացուցիչների համար: «Պետք է նշեմ, որ ՀԱԿ-ը մերժեց մեր այդ համագործակցության առաջարկը, սակայն ես հեռանում եմ մեծամասնական ճակատով պայքարից», ընդգծեց Րաֆֆի Հովհաննիսյանը՝ մաղթելով, որ խորհրդարանական գալիք ընտրությունները համապատասխանեն ազգային չափանիշներին:

«Որ Րաֆֆի Հովհաննիսյանն ինքնաբացարկ է հայտնել, **Նիկոլ Փաշինյանն** իմացել է առավոտյան, սակայն նրա լիազոր ներկայացուցիչը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովից տեղեկացել է, որ «Ժառանգության» առաջնորդը ինքնաբացարկի դիմում չի գրել: ՀԱԿ ներկայացուցիչն առաջարկեց սպասել մինչեւ փաստի կայացումը: Փաշինյանն ասաց, որ անձամբ իր հետ «Ժառանգության» ներկայացուցիչները որեւէ հանդիպում, շփում չեն ունեցել: Նրա ներկայացմամբ՝ երկու ուժերի ներկայացուցիչները հանդիպել են ընտրություններում առաջադրումներից առաջ, եւ Հայ ազգային կոնգրեսն առաջարկել է ներկայացնել «Ժառանգություն» կուսակցության մեծամասնական ընտրակարգով ընտրատարածքների քարտեզը, սակայն «Ժառանգության» ներկայացուցիչը երկար ժամանակ այդ քարտեզը չի ներկայացրել: «ՀԱԿ-ի ներկայացուցիչը նորից է կապվել «Ժառանգության» ներկայացուցչի հետ եւ առաջարկել քննարկել մեծամասնական ընտրակարգի հարց, սակայն պատասխանել են, որ հարցը կքննարկեն միայն առաջադրումներից հետո: Առաջադրումներից հետո «Ժառանգությունը» ՀԱԿ-ի առջեւ պայման է դրել. Րաֆֆի Հովհաննիսյանը կհանի իր թեկնածությունը թիվ 7 ընտրատարածքից եւ չի պայքարի Փաշինյանի դեմ, եթե ՀԱԿ-ը հրաժարվի 1, 4, 6, 9, 12 ընտրատարածքներում թեկնածուներից, որտեղ առաջադրվել են «Ժառանգության» պատգամավորները: Փաշինյանի խոսքերով, «Ժառանգության» առաջարկը ՀԱԿ-ում գնահատել են անտրամաբանական եւ անհիմն: «Ինձ ուղղակի հետաքրքրական կլինի՝ ինչպիսի՞ն կլիներ «Ժառանգության» պատասխանը, եթե ՀԱԿ-ը նույն առաջարկը ներկայացներ, ուրեմն «Ժառանգությունը» մեծամասնականով թեկնածու չէր ունենա», ասաց Փաշինյանը՝ հավելելով, որ իրենք 38 ընտրատարածքում ունեն իրենց թեկնածուն («Ժառանգությունից» 10 անգամ ավել), եւ իշխանափոխություն իրականացնող ուժը չպետք է գնա զիջումների, իսկ եթե որեւէ ընդդիմադիր ուժից տրամաբանությանը մոտ առաջարկություն ստանան, ապա կքննարկեն:

Փաստորեն Հովհաննիսյանի ինքնաբացարկից հետո թիվ 7 ընտրատարածքում կպայքարեն գործարար Սամվել Ալեքսանյանն ու Նիկոլ Փաշինյանը: Վերջինս Ալեքսանյանին հրավիրեց հեռուստաբանավեճի՝ պարզելու, թե Ալեքսանյանն ինչպիսի քաղաքական գործիչ է: Սամվել Ալեքսանյանի հարցով նա նամակ է ուղարկել ԱԺ նախագահ Սամվել Նիկոյանին:

«Երեւանի թիվ 7 ընտրատարածքի մանդատով Հայաստանի ԱԺ պատգամավոր համարվող Սամվել Ալեքսանյանը 4-րդ գումարման ԱԺ-ի գոյության ընթացքում գումարված բոլոր 10 հերթական նստաշրջանների քվեարկությունների կեսից ավելիին բացակայել է: ԱԺ կանոնակարգ օրենքի տրամաբանությամբ՝ 4-րդ գումարման ԱԺ գործունեության ընթացքում Ալեքսանյանն առնվազն 10 անգամ պետք է զրկվեր պատգամավորական մանդատից, մինչդեռ մինչ օրս Ալեքսանյանը պահպանում է այն: ԱԺ կանոնակարգ օրենքի տրամաբանությամբ, եթե նա չի զրկվել մանդատից, նշանակում է՝ վերջին 5 տարվա մեծ մասը անաշխատունակ է եղել եւ անաշխատունակության թերթիկ է ներկայացրել: Հաշվի առնելով հարցի բացառիկ կարեւորությունը, պահանջում եմ, ներկայացնել այն հիմքերը, որոնց ուժով Ալեքսանյանի բացակայությունները անհարգելի չեն համարվում: Համոզված եմ, որ տվյալ խնդրի ուսումնասիրության համատեքստում կարող են ի հայտ գալ կոռուպցիոն երեւույթներ, որոնց մտադիր եմ իմ իրավասությունների շրջանակներում օրենքով նախատեսված ընթացք տալ», ասաց Փաշինյանը:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*Հ. Գ. - Երեկ երեկոյան Րաֆֆի Հովհաննիսյանն արդեն պաշտոնապես դիմեց թիվ 7 ընտրատարածքային հանձնաժողովին իր փաստաթղթերը չքննարկելու պահանջով:*

# Կենսաթոշակային համակարգերի եվրոպական փորձը Հայաստանում

Եվրոհանձնաժողովի TAIEX ծրագրի եւ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ ՀՀ սոցիալական ապահովության պետական ծառայությունն ու Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն (ԿՀԻԿ) հիմնադրամը երեկ սեմինար էին կազմակերպել սոցիալական ապահովության եւ կենսաթոշակային բարեփոխումների վերաբերյալ:

Սեմինարում բացման խոսքով հանդես եկավ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար **Արթուր Գրիգորյանը**: Նա նշեց, որ ներկայումս գործող համակարգը չի վերանալու, այլ միայն ավելանալու են պարտադիր կուտակային եւ կամավոր կուտակային համակարգերը: Նախարարն առանձնակի ուշադրության արժանի համարեց այս ոլորտում Եվրոմիության երկրների փորձը: Նրա կարծիքով, այս քննարկումը եւս մեկ հնարավորություն է վերլուծելու հայկական փորձը եւ համադրելու միջազգային փորձի հետ:

ԵՄ պատվիրակության ղեկավար **Տրայան Հրիստեան** նշեց, որ սոցիալական ապահովության համակարգի բարեփոխումներն ամբողջ աշխարհում արդիական են: Ըստ նրա, Եվրոմիությունը որոշել է օգնել Հայաստանին օգտվելու եվրոպական փորձից: Մասնավորապես, Տրայան Հրիստեան տեղեկացրեց, որ սեմինարի ընթացքում հնարավոր կլինի ստանալ եվրոպական լավագույն փորձը Բելգիայից, Շվեդիայից, Չեխիայից, Հունգարիայից:

Սոցիալական ապահովության պաշտպանության ծառայության ղեկավար **Արտեմ Ասատրյանն** իր ելույթում նույնպես անդրադարձավ փորձի փոխանակման թեմային, ասելով, որ առանց դրա հնարավոր չէ բարեփոխումներ իրականացնել:

Հիշեցնենք, որ 2014-ից Հայաստանում անցում կկատարվի կենսաթոշակների կուտակային համակարգին: Այդ ժամանակ մինչեւ 40 տարեկան անձինք իրենք կսկսեն հոգալ իրենց կենսաթոշակի մասին եւ ամեն ամիս աշխատավարձի 5 տոկոսը կուղղեն հատուկ հաշվեհամարին: Նույն չափով էլ պետությունը գումար կփոխանցի քաղաքացուն: Կուտակված գումարները որպես կենսաթոշակ վերջինս կստանա 65 տարեկանից հետո:

Ա. Ս.

ՀԱԿԻՐՃ

## Երիտասարդները պահանջում են գիտության ֆինանսավորման բարձրացում

Երիտասարդ գիտնականները պահանջում են գիտության ֆինանսավորման ավելացում եւ նույնաբովանդակ կոչով դիմել են խորհրդարանական ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերին՝ իրենց նախընտրական ծրագրերում ներառել նաեւ գիտության ֆինանսավորման բարձրացման դրույթը:

Երեկ լրագրողների հետ հանդիպման ժամանակ երիտասարդ գիտաշխատողները, հանդես գալով երիտասարդ գիտնականների անունից, նշեցին, որ գիտնականներին աջակցության նպատակով պետության խոստացած 100 միլիոն դրամի ռոտացիան դեռեւս տեղ չի հասել:

Բանախոսներից **Արթուր Մովսիսյանն** ընդգծեց, որ մեր գիտնականների միջին տարիքն այսօր 58 տարեկանն է. «Իսկ երիտասարդ գիտնականին այսօր Հայաստանում ոչինչ չի հրապուրում, եւ հաճախ երիտասարդները ստիպված են լինում լքել Հայաստանը»:

Ի. Պ.

## Սրբապատկերների արտահանումը կասեցվել է

Կասեցվել է Հայաստանից սրբապատկերների արտահանման փորձը: Ազգային անվտանգության ծառայության մարմինների կատարած աշխատանքները մաքսանենգ արտահանումը կասեցրել են մարտի 25-ին:

«Արմենպրեսի» տվյալներով՝ ՀՀ պետական սահմանը հատելիս երկաթգծի «Այրում» կայարանում կրկնակի զննության է ենթարկվել Իրաքյելի քաղաքացի Դավիթ Հանոչը, եւ նրա ուղեբեռում հայտնաբերվել է չհայտարարագրված 18 սրբապատկեր:

Փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ, քննությունը վարում է ԱԱԾ քննչական վարչությունը:

Ի. Պ.

## Խ. Սուքիասյանը հնարավորինս շուտ որոշում է խնդրում

Գործարար Խաչատուր Սուքիասյանը դիմել է թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին՝ խնդրելով հաշվի չառնել ոստիկանության անձնագրային եւ վիզաների վարչության այն գրությունը, որում նշված է, թե 5 տարի անընդմեջ Սուքիասյանը Հայաստանում չի ապրել, ու որպես պատգամավորության թեկնածու գրանցել իրեն: Սակայն թիվ 10 ձգձգում է հարցը, ինչի մեջ Սուքիասյանը միտում է տեսնում. «...Իմ համոզմամբ բացասական որոշումը կայացվելու է որքան հնարավոր է ուշ, որպեսզի փորձեք ինձ զրկել իմ իրավունքներից օգտվելու հնարավորությունից, նաեւ ժամկետի իմաստով, իսկ մենք լավ գիտենք, որ քարոզչությունն իրականացվում է որոշակի ժամկետում, խնդրում եմ իմ հարցով որոշումը կայացնել հնարավորինս շուտ», ասված է Սուքիասյանի դիմումում: Արդյո՞ք իշխանական շրջանակներում որոշում կա խոչընդոտելու Սուքիասյանի առաջադրմանը, եւ ավելի նախընտրելի է համարվել ընդդիմադիր պոպուլիստի ներս թողնել խորհրդարան, քան Սուքիասյանի նման լուրջ տնտեսական գործչի. սա մի հարց է, որի պատասխանը կարելի կլինի տալ ԸԸՀ որոշումից հետո:

Մ. Խ.

## Մայր քաղաքի նոր ավտոբուսները շնորհավոր

*1-ին էջից*

Հրապարակում դեղին, նոր «Բոգդան» ավտոբուսների ասես շքերթ էր, ոչ մեկ տասնյակ նոր ավտոբուսներ իրար հետեւից, շարասյունով սրընթաց մտնում ու շրջադարձ գործելով արագ անցնում, ճանապարհը շարունակում էին դեպի Տիգրան Մեծի պողոտա: Ուղղակի անհավանական էր... Հետո սթափվելով, հիշեցի ու հասկացա, որ ինչ-որ ճանապարհով եկել եւ Գյումրու միջով սլանում են դեպի Երեւանի ճանապարհը... Ամեն նման առիթով սա հիշում ու, մի հասարակ նոր ավտոբուսն ի՞նչ է, քաղաքիս համար սկսում եմ երազել:

Այստեղ Գյումրու քաղաքային տրանսպորտի նկարագիրը ներկայացնելու նպատակ չունեմ, դա առանձին խոսակցության նյութ է: Փոխարենը այս անգամ ուզում եմ մի առաջարկություն անել: Մայրաքաղաքում շաբաթ օրը չինական նոր ավտոբուսների առաջին ուղեւորը, կարծեմ, Հանրապետության նախագահն է եղել: Թող խորհրդարանական առաջիկա ընտրարշավի ընթացքում Գյումրու ընտրողների հետ հանդիպման եկող (մյուս քաղաքների իրավիճակը չգիտեմ) ամեն պատգամավորության թեկնածու ու կուսակցության մի ղեկավար ներկայացուցիչ նախքան հանդիպումը փորձի այստեղ, նաեւ, ներքաղաքային մի երթուղու հասարակական տրանսպորտով ճանապարհ անցնել, տեսնել: Եվ հատկապես՝ ավտոբուսով... եթե պատահեցնի: Եվ մի կերպ դիմանա՝ եթե այդ ավտոբուս կոչվածն էլ իր տեսքով ու վիճակով այսօր լոկ պայմանականորեն կարելի լինի համարել քաղաքային տրանսպորտի միջոց:

Որ վաղը էլի պատգամավոր ու կառավարություն լինեն՝ իմանան:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԱ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353

Համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

Անցուդարձ

# Դաշնակցությունը «դարդ չունի»

Երբ խորհրդարանական նախորդ ընտրություններից առաջ ՀՅԴ-ն դարձավ իշխանական կոալիցիայի մաս, որի հիմնական կարգախոսն էր (ի դեմս՝ ՀՀԿ-ի)՝«Առաջ, Հայաստան»-ը, ապա անգամ այդ ժամանակ, ԱԺ-ում ՀՅԴ խմբակցության անփոփոխ ղեկավար **Վահան Հովհաննիսյանը**, իր իսկ խոսքերով, «Ո՛չ, չէր հավատում այդ կարգախոսին»: Այժմ, երբ նոր խորհրդարան ենք ընտրում, իսկ ինի՝ գործողի ընթացքում ՀՅԴ-ն իշխանական կոալիցիայի մաս կազմողից վերածվել է խորհրդարանական ընդդիմության, բնական է, որ նույն Վահան Հովհաննիսյանը չի հավատալու՝ ՀՀԿ-ի նոր կարգախոսին՝ «Հավատանք, որ փոխենք»:




Ու, առհասարակ, Վահան Հովհաննիսյանը երեկ լրագրողների հետ հանդիպմանը, ընդգծեց, որ «հավատը քաղաքական կատեգորիա չէ». «Ես հավատում եմ Աստծուն, այլ ոչ թե քաղաքական գործիչներին: Եթե քաղաքական մեծամասնությունը նույնպես հավատում է Աստծուն, ապա հնարավորություն կա, որ մենք միմյանց կհավատանք: Բայց ես հիմա դրա հիմքերը չունեմ», ասաց Հովհաննիսյանը: ՀՅԴ ներկայացուցիչը հիշեց դրվագ Նոր կտակարանից: Մասնավորապես այն պահը, երբ հարություն առած Քրիստոսին առաքյալներից մեկը «չի հավատում» եւ հավատում է միայն, երբ շոշափում է…:

«ՀՀԿ-ի համամասնական ցուցակը զննելով՝ փոփոխությունների հոտ չի գալիս, այդ ցուցակը ցույց է տալիս նաեւ նրանց կադրային բանկի սակավությունը, չինովնիկը մնում է չինովնիկ…»: Հիշեցնենք, որ խորհրդարանական վերջին ճեպազրույցների ժամանակ ՀՀԿ խմբակցության ղեկավար **Գալուստ Սահակյանը** իրենց համամասնական ցուցակին ուղղված քննադատություններին ի պատասխան ասել էր. «Թող իրենց ցուցակների դարդը լացեն: Էնպես չէ, որ իրենց ցուցակներում սրբեր են նստած»: Այս առումով էլ Վահան Հովհաննիսյանը երեկ արձագանքեց. «Ախր մենք դարդ չունենք, որ լացենք…»:

Ինչեւէ, «անդարդ» ՀՅԴ-ի ցուցակում ընդգրկված առաջին 20-ին, Վահան Հովհաննիսյանը հատկապես ընդգծեց, որ ուշադրություն դարձնենք. հավանաբար ՀՅԴ-ն կանխատեսում է հենց մոտ 20-տոկոսանոց արդյունք՝ գալիք խորհրդարանում: Ի դեպ՝ ՀՅԴ ցուցակի քսաներորդ համարի մասին: Ինչպես գիտենք, այդ հորիզոնականը զբաղեցնում է պատգամավոր Լիլիթ Գալստյանը, ու այս հանգամանքը, որոշ աղբյուրների պնդմամբ, առաջացրել է Գալստյանի դժգոհությունը: Սակայն նախ ինքը՝ Լիլիթ Գալստյանն ավելի վաղ հայտարարեց, որ «բազմաթիվ այլ շրջանակներ կան իր համար՝ գործունեություն ծավալելու», այնուհետեւ, երեկ Վահան Հովհաննիսյանը հիշեցրեց, որ անցած ընտրություններում ՀՅԴ ցուցակում Գալստյանը զբաղեցնում էր քսանմեկերորդ տեղը, բայց անցավ խորհրդարան. «Այսօր Լիլիթը քսաներորդն է», ասաց Հովհաննիսյանը: Ինչ վերաբերում է պատգամավորներ Հրայր Կարապետյանի, որը նաեւ ԱԺ-ի պաշտպանության, ներքին գործերի ու ազգային անվտանգության մշտական հանձնաժողովի նախագահն է, եւ Արթուր Աղաբեկյանի՝ ՀՅԴ ցուցակում չհայտնվելու փաստին, ապա այս առումով Հովհաննիսյանը պարզաբանեց. «Նրանց կուսակցությունը այլ հանձնարարություններ է տվել: Ու առհասարակ, բյուրոյից միայն ես կամ ցուցակում, քանի որ, ի տարբերություն այլ կուսակցությունների, ՀՅԴ-ն բազմաթիվ այլ ոլորտներ եւս ունի՝ գործունեություն ծավալելու եւ պատասխանատվություն կրելու»:

Իսկ ՀՅԴ-ին, ինչպես բանախոսը նկատեց, «կարելի է սիրել, կամ չսիրել, բայց չիմանալ Դաշնակցության մասին՝ անհնար է»: Հենց այս պատճառով էլ Հովհաննիսյանը կասկածանքով է վերաբերվում «Հայաստանի եվրոպացի բարեկամներ» խմբի անցկացրած նախընտրական սոցհարցմանը, ըստ որի մեր հասարակության միայն 34 տոկոսն է «իրազեկված ՀՅԴ-ի մասին». «Ամեն հայ՝ մանուկ թե ծեր, թեկուզ բացասականորեն, բայց հաստատապես իրազեկված է Դաշնակցության մասին», ընդգծեց ՀՅԴ ներկայացուցիչը:

Հ. ԱՓՅԱՆ

# Փախստականների կազմակերպությունների ներկայացուցիչները՝ ՀԴԿ-ի գրասենյակում

Մարտի 23-ին Հայաստանի Դեմոկրատական կուսակցության կենտրոնական գրասենյակ էին այցելել Ադրբեջանից փախստականների կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Ավելի քան երկու ժամ տեւած հանդիպման ընթացքում կուսակցության հյուրերը ներկայացրին իրենց հոգսերն ու չլուծված բազում հարցերը: Նրանք ծանոթացան ՀԴԿ նախընտրական ծրագրին, տեղեկացան իրենց խնդիրներին վերաբերող կուսակցության հանձնառություններին:

Հանդիպման մասնակիցներն իրենց զորակցությունը հայտնեցին ՀԴԿ նախընտրական ծրագրին:

Որոշվեց հանդիպումները դարձնել պարբերական:

ՀԴԿ մամուլի ծառայություն

# «Կյանքի խոսք» աղանդը դատական հայց է ներկայացրել «Իրավունք Մեդիա» ՍՊԸ-ի դեմ

«Կյանքի խոսք» աղանդի հայաստանյան մասնաճյուղը՝ **Արթուր Սիմոնյանի** գլխավորությամբ, «Իրավունք» թերթի դեմ հայցով դիմել էր դատարան՝ «Հետաքննության» թիվ 39-ում հրապարակված կոլաժի կապակցությամբ:

Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում մարտի 13-ին նշանակված նախնական դատական նիստը հայցվոր կողմի չներկայանալու պատճառով ու պատասխանողի փաստաբանի միջնորդությամբ հետաձգվել էր եւ նշանակվել էր օրեր առաջ:

Ըստ հայցվորի՝ թերթում տպագրված նյութում ոտնահարվել է իրենց պատիվը, արատավորվել բարի համբավը, եւ հոդվածում տեղ գտած «աղանդ» բառն իրենց համար վիրավորական է: Նրանք վրդովվել են նաեւ, որ կոլաժում ներկայացված է այնպես, որ պոռնոսկանդալի հերոսուհու՝ Անժելա Սարգսյանը «Կյանքի խոսք» աղանդի ներկայացուցիչ է, իսկ վերոնշված աղանդի պարագլուխ Արթուր Սիմոնյանին պատկերել էին կաթոլիկ վանականի հանդերձով: Հայցվոր կողմը պահանջում է հերքել «կրոնական ատելություն հրահրող» տեղեկությունները եւ ներողություն խնդրել:

Հայցվոր կողմը դրամական պահանջ չի ներկայացրել, սակայն հնարավոր է, որ առաջիկայում այդպիսի պահանջ ներկայացվի: Առայժմ դրամական պահանջը սահմանափակվում է դատական ծախսերի հատուցմամբ:

Ըստ հայցվորի՝ «աղանդ» բառը իրենց համար վիրավորական է: Իսկ ի՞նչ է «Կյանքի խոսք»-ը:

Ընդգծենք, ՀՀ սահմանադրության հոդված 8.1-ի առաջին պարբերությունը. «Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգեւոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման եւ ազգային ինքնության պահպանման գործում»: Իսկ «աղանդ» բառը «Արդի հայերենի բացատրական բառարանում» տրված է որպես՝ 1. տվյալ եկեղեցու դավանանքից շեղվող կրոնական ուսմունք, 2. տվյալ երկրում ընդունված կրոնին օտար մի այլ կրոն:

Դատական գործընթացը գտնվում է առաջին փուլում: Սպասենք զարգացումների:

Մյուս դատական նիստը տեղի կունենա ապրիլի 13-ին:

Մինչ այդ ավելորդ չենք համարում նշել, որ ՀՀ մամուլի մասին օրենքում կոլաժների ու երգիծանկարների մասին որեւէ վերաբերմունք արտահայտված չէ: Այս պարագայում՝ բարեբախտաբար…

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

# Չկողմնորոշվածները կվճռեն ամեն ինչ

*1-ին էջից*

Ընդ որում՝ եթե ԲՀԿ-ն շարունակի ընդդիմադիր խաղեր տալ, մի առյուծի բաժին այդ ձայներից հենց նա կտանի: Ահա եւ չկողմնորոշվածները որոշելու են բոլորիս ճակատագիրը, ինչու չէ՝ նաեւ մեկ տարի անց նախագահական ընտրությունների ճակատագիրը: Եվ նայած ով ինչպես կօգտագործի քարոզարշավի մեկ ամիսը՝ այդ մեկ երրորդին ով ինչով կգայթակղի, դրանից կախված է լինելու, թե ծանրաչափի սլաքն ում կողմը կթեքվի: Հիմա անգամ եւ արդեն տնտեսում գնացողները փորձում են իմանալ ընտրողի բերանի զոլը՝ ում ինչո՞վ են գրավելու, սակայն ամեն դեպքում գրագետ քարոզարշավի ազդեցությունը անտեսողները խորապես սխալվում են: Առաջին ազդեցությունն ընտրողի վրա արդեն ընտրացուցակներով է տեղի ունեցել (առաջիկա օրերին «Ազգ»-ը կփորձի առավել խոր ուսումնասիրել), եւ, կարելի է ասել, որ հիմնական ֆավորիտ ուժերի ցուցակները հիասթափությունների պատճառ էին և՛ համակիր, և՛ հակառակորդ ուժերի շրջանակում: Ասենք, որ առաջին բանը, որ չի բավարարում լայն շրջանակներին՝ ՀՀԿ, ԲՀԿ եւ ՀԱԿ (քանի որ սոցիոլոգները հենց նրանց են անառարկելի կերպով մեծ տոկոս տալիս ապագա խորհրդարանում) ցուցակներում՝ ներկա եւ նախկին պաշտոնյաների ու նոմենկլատուրային դարձած քաղաքական գործիչների ընդգրկումն է՝ մի տեսակ կարծես սովորական մարդու համար այս ցուցակներում բոլորովին տեղ չի եղել. ԲՀԿ-ում ԲՀԿ-ական նախարարներ ու պաշտոնյաներ կան շատ, ՀՀԿ-ն լցված է ողջ կառավարությամբ եւ մարզային իշխանության ներկայացուցիչներով, ՀԱԿ-ը՝ նախկին իշխանության ներկայացուցիչներով: Այսինքն՝ անկախ իշխանամետ եւ ընդդիմադիր լինելուց, հոգեբանությունը նույնն է՝ ոչինչ չզիջել մյուսներին, ովքեր իշխանության մեջ չեն, ու ապահովել ժառանգական իշխանությունը: Է, ի՞նչ սերնդափոխությունից են խոսում բոլորը: Ընդ որում՝ սերնդափոխությունը մեզ մոտ հասկացվում է բառացի՝ ավագներին երիտասարդներով փոխարինելը: Մինչդեռ՝ ավելի քաղաքակիրթը կառավարողների շրջաբակն անընդհատ ընդլայնելն է, եւ անկախ տարիքից իրական ինտելեկտուալների եւ մտավորական մարդկանց ներառելը: Ի դեպ, ՀՀԿ-ի դեպքում երեւում են նաեւ թեւեր՝ ասենք, ազդեցիկ թեւերը առաջ են խցկել իրենց մարդկանց, իսկ այն մարդիկ (եւ այժմյա պատգամավորներից շատերը), որոնք այդ թեւերին ժամանակին շատ մեծ հավատարմություն չեն ցույց տվել, հայտնվել են անանցողիկ տեղերում: Անգամ աչքի է զարնում այն վարկածի ստվերը (եթե իրականանա շրջանառվող վարկածը), որ եթե Հովիկ Աբրահամյանը մինչեւ նախագահական ընտրությունները վարչապետ նշանակվի, խոսքը անցումային վարչապետի մասին է, ապա ներկա վարչապետի թիմը, բավական առաջ լինելով ՀՀԿ ցուցակում, կանցնի խորհրդարան, վարչապետն ԱԺ նախագահ կլինի (առայժմ՝ մինչեւ նախագահական ընտրություններ):

Իհարկե, դեռ շատ ժամանակ կա՝ մարսելու ընտրողի դաշին ներկայացված համամասնականի ողջ արիալը, եւ դա մենք կանենք, սակայն մեծամասնականի մասով ուզում ենք մի քանի նկատառում հայտնել: Հիշեցնելով, որ հենց տողերիս հեղինակն էր դեմ 100 տոկոս մեծամասնականին՝ կուսակցական նախընտրություններ չունեցող Հայաստանի քաղաքացուն իսպառ չզրկելու համար առաջադրվելու հնարավորությունից, արձանագրում ենք, որ ներկա դեպքում, չնչին բացառություններով, մեծամասնականով առաջադրումները ավելի քան կուսակցական են եւ կրկնում են համամասնական կարգի կուսակցական հարաբերակցությունները: Առյուծի բաժին առաջադրվածներին պաշտպանում է ՀՀԿ-ն, նրանցից երեք եւ ավելի անգամ պակաս թեկնածուների պաշտպանում է ԲՀԿ-ն, մյուս կուսակցություններից եւս աջակցվողներ եւ առաջադրվածներ կան, ընդ որում՝ առավելաբար ՀՀԿ-ի ու ԲՀԿ-ի պաշտպանածները կամ գործարարներ եւ փողատերեր են, կամ տեղական վարչարարներ, որոնք, միեւնույն է, փողային լծակների են տիրապետում: Ու ոչ մի սովորական մարդ: Անգամ այն թեկնածուների առումով, որոնց դիմաց գրված է անկուսակցական, եթե լավ քչփորում ենք, տեսնում ենք, որ հիմնական ֆավորիտների պաշտպանյալն են կամ պարզապես գործարարի ձեռնարկության աշխատակիցը, ու նախօրոք մտածվել է, որ թեկնածություն դնի-«շեֆի դեմ ու վախից հանի», քանի որ օրենքի պահանջ է՝ այս անգամ որեւէ մեկը չի կարող մեկ թեկնածու լինել, այլընտրանք պետք է լինի: Կամ էլ «այլընտրանքային» թեկնածուն օլիգարխից փող պոկելու ակնկալիքներ ունի՝ պետք եկավ, անունները կտանք: Որոշ մեծամասնական տարածքներում իսկապես մրցակցությունը իրական է, օրինակ՝ օլիգարխ Սամվել Ալեքսանյանի համար Նիկոլ Փաշինյանը կարգին գլխացավանք է լինելու, սակայն մեզ համար այդպես էլ անհասկանալի մնաց Րաֆֆի Հովհաննիսյանի՝ այդ (թիվ 7) ընտրատարածքում առաջադրումը եւ ինքնաբացարկը: Հատկապես վերջինը, քանի որ եթե մյուս ընդդիմադիրները չեն ընդունում բոլոր ընդդիմադիրներով միասին քննարկելու եւ ընտրատարածքներում մեկ թեկնածու թողնելու հարցը, ուրեմն ի՞նչ իմաստ ուներ Հովհաննիսյանի ինքնաբացարկը, կիմանայինք՝ ընտրողը նրա՞ն է նախընտրում, թե՞ Փաշինյանին: Բայց իրական մրցակցություն մեծամասնականի շատ ընտրատարածքներում չկա, եթե ՀՀԿ-ն ու ԲՀԿ-ն պայմանավորվել են այս կամ այն թվով թեկնածուներ ունենալու առումով, եւ գիտեն էլ նախապես, որ (մի քանի անակնկալի բացվածքը ոչինչ չի որոշում) իրենք են անցնելու, էլ ի՞նչ մրցակցության մասին է խոսքը, մնացյալը տեխնիկայի հարց է: Իսկ դրա մեջ մտնում են ընտրակաշառքը, վարչական ռեսուրսը, քաղցր խոստումները եւ երբեմն միայն ճիշտ քարոզարշավը: Է, ուրեմն, իսկապես ճիշտ էին ընդդիմադիրները, որոնք դեմ էին մեծամասնականին, բայց նրանք ասում էին՝ դա իշխանության վերարտադրության երաշխիք է, իսկ մենք ասում ենք. ո՞ւմ է պետք այս կարգի մեծամասնականը, որը համամասնականի մինիքարտեզն է, ու միայն մի բան է ապահովում՝ մանդատներ իշխանական ռեսուրս եւ փող ունեցողների համար: Ընդունեցի սխալս այսպիսով:

# «Երեխա՞ ես, ինչ է, որքա՞ն կարելի է փեշիցս կառչած մնալ»

## *1921-ի մարտի 15-ին տնից դուրս գնացող Թալեաթ փաշային հանդիմանել է կինը՝ Հայրիեն*

Հայատյացությունը թուրքական իրականության առանձնահատկությունն է, ինչպես նաեւ այլ ժողովուրդների նկատմամբ թուրքերի դարավոր ավանդական «հանդուրժողականության» չափանիշը: Իրականություն ասելով պետք է հասկանալ Թուրքիայի պետական եւ հասարակական շրջանակներին, որոնք ժամանակ առ ժամանակ ոհմակի են վերածվում, ինչպես հայ ժողովրդին հասցեագրված հայհոյանքներով վերածվել էին փետրվարի 26-ին Ստամբուլում Խոջալուի «կոտորածի» այսպես կոչված ոգեկոչման հանրահավաքում:

Այլ կերպ, Թուրքիայում պետություն-հասարակություն համերաշխությունը բացի Հայոց ցեղասպանության ժխտողականությունից, անխափան գործում է նաեւ հայատյացության տարածքում: Եթե ժխտողականության շուրջը ձեւավորված համերաշխությունը պայմանավորում է հայերի, թուրքական պետական կառույցների եւ ժողովրդական զանգվածների համատեղ ջանքերով բնաջնջումից բխող հանցագործի՝ պետության եւ հասարակության համար ընդհանուր հոգեբանությունը, ապա հայատյացության տարածքում համերաշխության հիմքը կազմում է բռնության նկատմամբ մղումը, որն էլ հանգեցնում է մարդասպանի փառաբանմանը:

Թուրքական պետությունը փառաբանելու միջոցով հերոսացնում է մարդասպանին, իսկ հասարակությունը հիանում է մարդասպանով, որ հերոսանա: Հասարակության տարածքում խոսքը հանրահավաքներում կամ մարզադաշտերում «Մենք բոլորս Օգյուն Սամասթ ենք» բացականչություններով մարդասպանի նկատմամբ հիանալու մասին է: Իսկ պետության դեպքում հայ ժողովրդի դահիճներին, մասնավորապես Թալեաթ փաշա կոչված արյունարբու գազանին որպես «հայրենիքին անմնացորդ նվիրված անձնուրաց հայրենասերի» մեծարելուն է վերաբերում:

Մեծարման պայմաններում այս մարդասպանը ինքնաբերաբար դառնում է անվեհեր ու մահն է արհամարհում, փոխարենը հայ վրիժառու Սողոմոն Թեհլերյանը «ողորմելի, վախկոտ, ահաբեկիչ», իսկ գերմանական դատարանը՝ «հայերի նկրտումներին տուրք տված կամազուրկ ատյան»:

Ի դեպ, նախքան Ստամբուլից ճողոպրելը, 1918-ի նոյեմբերի 1-ին Իթթիհատ վե Թերաքքիի վերջին համագումարում այդ նույն մեղադրանքով Թալեաթը դատապարտել էր եվրոպական եւ ամերիկյան հասարակություններին: Ելույթում նա ասել էր. «Տեղահանության եւ կոտորածների ենթադրությունները վերջին աստիճանի չափազանցված են: Հայկական եւ հունական մամուլը, նախապես կռահելով, թե բռնություն բառն ինչպիսի ծանր ազդեցություն է թողնում թուրքերին բացարձակ չճանաչող, ավելի շուտ վատ ճանաչող Եվրոպայի եւ Ամերիկայի հասարակական կարծիքների վրա, մեկը տասնապատիկ ավելացնելով, աղմկախեղդ են անում աշխարհին: Մինչդեռ պետության գոյության համար վճռորոշ աշխարհամարտի ընթացքում բնական էր եւ անհրաժեշտ անհանդուրժողականության դրսեւորումն այն շարժումների նկատմամբ, որոնք կաշկանդում էին զորքերի տեղաշարժը, թիկունքում ապստամբելով սպառնալիքի տակ էին դնում երկրի ապագան ու բանակի անվտանգությունը»:

Սա նշանակում է, որ տարածաշրջանի համար ժողովրդավարության մոդել հանդիսացող Թուրքիան Հայոց ցեղասպանության հարցում դեռեւս հայ ժողովրդի դահիճ Թալեաթի դիրքերում է: Հակառակ նրան, 1918-ի հոկտեմբերի 30-ին Մուդրոսի զինադադարի կնքումից հետո ձեւավորված մեծ վեզիր Ահմեդ Իզզեթ փաշայի կառավարության դիրքերը և՛ ցեղասպանության, և՛ դահիճի հարցերում շատ ավելի առաջադեմ են եղել, մինչեւ Թուրքիայում իշխանության գալը Թալեաթի նկատմամբ վերապահությամբ են մոտեցել քեմալական շարժման ղեկավարները, իսկ Կ. Պոլսո օսմանյան մամուլը գազանին ներկայացրել է իբրեւ չարանենգ ստահակի, արձագանքելով նրա սպանությանը:

Զինադադարի կնքումից երկու օր անց, 1918-ի նոյեմբերի 1-ի լույս 2-ի գիշերը Թալեաթը գերմանական սուզանավով Բոսֆորից Էնվերի, Ջեմալի, դոկտ. Նազիմի, Բեհաեդդին Շաքիրի, Ջեմալ Ազմիի, Կ. Պոլսո ոստիկանապետ Բեդրիի եւ Բեյրութի նահանգապետ Ազմիի հետ ուղեւորվում է Օդեսա, որ այնտեղից քաջաբար Գերմանիա ճողոպրի: Նոյեմբերի 5-ին Իզզեթ փաշան պաշտոնական գրություն է ուղարկում Բեռլին՝ պահանջելով հանձնել Թալեաթին ու նրա ընկերներին, քանի որ պատերազմի հանցագործ են:

1919-ի ապրիլին օսմանյան ատյանը հեռակա կարգով մահապատժի է դատապարտում Թալեաթին: Սակայն դա չի խանգարում, որ նա բնակություն հաստատի Բեռլինի Շարլոտենբերգ թաղամասում, Հարդենբերգ փողոցի առանձնատանը: Պարզապես նրան ահուսարսափ է ներշնչում վրիժառության հավանականությունը: Հետապնդումից խուսափելու համար Թալեաթ փաշան ստանում է Ալի Սալիհ անունը, ֆեսի փոխարեն սկսում է կրել լայնեզր գլխարկ, նույնիսկ սափրում է բեղը:

Ավելին, այն ահուսարսափը, որը Բեռլինում պատում է Թալեաթը, ստիպում է նրան աղերսագին նամակով դիմել Scotland Yard-ի աշխատակից Օբրի Հերբերթին, որին նա ճանաչում էր դեռեւս Պոլսից, վերջինի Մեծ Բրիտանիայի դեսպանատանը ծավալած երկարամյա գործունեության տարիներին: 1924-ին հրատարակված «Ես ինքս» գրքում Թալեաթի նամակի մասին Հերբերթը գրում է. «Զինադադարի կնքումից (1918-ի հոկտեմբերի 30-ին) մի քիչ էր անցել, Թալեաթն ինձ նամակ էր գրել, ասելով, որ հայկական ջարդի պատասխանատուն ինքը չէ, ի վիճակի է դա ապացուցել եւ ապացուցելու մեծ ցանկություն ունի: Միաժամանակ նշում էր, որ Անգլիայի եւ Թուրքիայի հա-




րաբերությունների բարելավումը բխում է երկու երկրների շահերից, ինձ հետ որեւէ չեզոք երկրում հանդիպելու ցանկություն հայտնում: Ես նրան իմ գոհունակությունը հայտնեցի, տեղեկացնելու համար, որ ինքը հայերի ջարդի պատասխանատուն չէ, բայց եւ այնպես անօգուտ համարեցի մեր հանդիպումը»:

Հանդիպումն, այնուամենայնիվ, կայանում է, սակայն Հերբերթին Թալեաթի ուղարկած անանուն հեռագրից հետո՝ 1921-ի փետրվարի 26-28-ին Դյուսելդորֆում: Հանդիպմանը Թալեաթը վերստին անդրադառնում է հայերի ջարդին, Հերբերթի վկայությամբ՝ նույնիսկ ջարդի վերաբերյալ զեկուցագիր է պատրաստում եւ ցանկանում է, որ Անգլիայի ղեկավարները ծանոթանան զեկուցագրին: Դրա առնչությամբ Հերբերթը գրում է. «Ինչպես Թալեաթն էր ասում, պատերազմի սկզբին հայերը բանակ են կազմել եւ թիկունքից հարվածել ռուսների դեմ կռվող թուրքերին: Դրանում դեր են խաղացել 3 հայ պատգամավորներ: Հետո լուրեր են տարածվել կանանց եւ երեխաների ահավոր սպանության եւ մահմեդականների կոտորածի մասին: Թալեաթը երկու անգամ հակադրվել է հայերի տեղահանությանը: Նույնիսկ նպաստել է հետաքննության անցկացմանը, որի հետեւանքով կախաղան են հանվել մի քանի թուրք եւ քուրդ»:

Այս հանդիպմանը, որը տեղի էր ունեցել Թալեաթի սպանությունից մեկուկես ամիս առաջ, նա չի մոռանում Հերբերթին ասել, որ մահից բացարձակապես չի վախենում: Սակայն նրա կինը՝ Հայրիե խանումը, Մուրադ Բարդաքչին տված հարցազրույցում ճիշտ հակառակն է պնդում: «Հիշո՞ւմ եք փաշայի սպանության օրը», հարցին Հայրիե խանումը պատասխանում է. «Այդ օրը հյուրեր ունեինք, ժամը 11-ին հրավիրել էինք ճաշի: Ինձ ասաց՝ մինչեւ ճաշկերույթը գնամ փողկապ առնեմ Ռեֆիք բեյի հետ: Դռնից դուրս գալուց՝ ավելացրեց. «Սիրտս բոլորովին դուրս գալ չի ուզում: Տերը վկա, ամենեւին չեմ ուզում մոտիցդ հեռանալ»: Ես միջամտեցի. «Դե փաշա, դու արդեն համը հանում ես: Ի՞նչ է, երեխա ե՞ս, որքան կարելի է իմ փեշից կառչած մնալ»: Պատասխանեց. «Ի՞նչ իմանամ, քո ներկայությունը ինձ մի տեսակ ուժ է տալիս»: Ասացի. «Ընդամենը պիտի գնաս մի փողկապ առնես ու գաս, ես քեզ հետ դուրս չեմ գա»: Արդեն տանն էլ մարդ կար»:

Այնուամենայնիվ, 1921-ի մարտի 15-ին, երեքշաբթի օրը, ժամը 11-ի կողմերը Թալեաթը փողոց է դուրս գալիս: Նույն պահին Հարդենբերգ փողոցի դիմացի մայթում հայտնվում է Սողոմոն Թեհլերյանը, առաջանում եւ փոխում է մայթը: Ահա թե ինչպես է նկարագրում այդ պահը հայ վրիժառուն. «Ձեռնափայտը անփույթ ճոճելով քայլում էր: Երբ հավասարվեցի, Թալեաթը շեշտակի նայեց ինձ, աչքերի մեջ առկայծեց մահվան սարսուռը: Վերջին քայլը բեկվեց, մի քիչ թեքվեց, որ խուսափի, բայց զենքը քաշելու ու գլխին պարպելու մեկ եղավ... Թալեաթը երեսի վրա տապալվեց: Սեւ, թանձր արյունը վայրկենապես լճացավ նրա գլխի շուրջը, կարծես ջարդված անոթից մազութ էր թափվում...»:

Թերեւս հետաքրքրական են Թալեաթի սպանությանը քեմալականների արձագանքն ու օսմանյան մամուլի գնահատականը, սակայն դրանք մասնավոր մոտեցում են պահանջում:

**ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ**

# Իրականության «առեղծվածը» եւ առեղծվածի «իրականությունը»

Այսպես կոչված «Կովկասյան Աղվանքի» շուրջը պատմաբանասիրական բանավեճն առնվազը կեսդարյա պատմություն ունի: Ըստ էության, դա գիտական խնդիր չէ, այլ արհեստականորեն սադրվել է Ադրբեջանում, որտեղ նպատակադրված էին անցյալ դարասկզբին Արեւելյան Անդրկովկասում թուրք-բոլշեւիկյան վերաձեւումները «հիմնավորել պատմական ժառանգորդությամբ»: Այն է՝ «ապացուցել», որ Լեռնային Ղարաբաղը «հայ միջավայրի հետ երբեւէ կապ չի ունեցել»:

Հայ պատմագիտությունը հիմնավորապես հերքել եւ հերքում է այդ հակագիտական մոտեցումը: Խնդրին անդրադարձել են նաեւ խորհրդային, ռուս եւ եվրոպական արեւելագետներ: Վերջին շրջանում ուշագրավ ուսումնասիրություններ են անում նաեւ իրանցի մասնագետները: Հարցի մասնագիտական արծարծումը դուրս է մեր իրավասության եւ հետաքրքրությունների շրջանակից եւ թեմային անդրադառնում ենք զուտ քաղաքական դիտանկյունից:

Ադրբեջանցի ուսումնասիրող Ֆարիդա Մամեդովան մի ծավալուն հարցազրույց է տվել, որի առանցքային «գաղափարը» այն է, որ «Կովկասում հայերը պատմական հայրենիք չունեն, քանի որ նրանք այստեղ աբորիգեն չեն»: Մամեդովան Հայաստանը «տեղորոշում է» ինչ-որ վիրտուալ տարածքում՝ «Եփրատ գետի վերին ավազանում, որտեղ Գրիգոր Լուսավորիչը մկրտել է հայերին»: Այս «տրամաբանությամբ» առաջնորդվելու դեպքում սլավոնական ազգերի հայրենիք «պիտի համարել Կիեւի Կրեշչատիկը», իսկ իսլամադավան բոլոր ժողովուրդներին «հարկ կլինի հավաքել Մեքքայի շուրջ»:

Բայց Մամեդովայի անտրամաբանականությունը միայն այսքանով չի սահմանափակվում: Նա «Կովկասյան Աղվանքի քաղաքական սահմանները» տարածում է մինչեւ Արեւելյան Անատոլիա, իսկ հյուսիսում՝ ներառում Դաղստանը: Ինչպես տեսնում ենք, «ախորժակն ուտելիս է բացվում». եթե նրա ուսուցիչ Զիա Բունիաթովը «բավարարվում էր» Լեռնային Ղարաբաղով եւ Նախիջեւանով եւ «մեծահոգաբար» ՀԽՍՀ տարածքին «ձեռք չէր տալիս», ապա Ֆարիդա խանումն ստանձնել է Իլհամ Ալիեւի աշխարհաքաղաքական հավակնությունների սպասարկուի դերը:

Ինչի՞ հանգեցրեց «Լեռնային Ղարաբաղը հայ միջավայրի հետ պատմամշակութային կապ չունի» նպատակադրվածությունը՝ ակնհայտ է: Ղարաբաղյան շարժումն այդ «հիմնավորման» հակադարձումն էր: Ինչի՞ կարող է բերել «Կովկասում հայերը պատմական հայրենիք չունեն»՝ Ադրբեջանի իշխանություններից հրահանգված «տեսաբանումը», սա խնդիր է ոչ միայն եւ ոչ այնքան Հայաստանի, որքան՝ միջազգային հանրության համար, որը փորձում է հաշտություն եւ խաղաղ համակեցություն ստեղծել իր իսկ կողմից Հարավային Կովկաս անվանված տարածաշրջանում:

Հնարավո՞ր է կարգավորում հուսալ, երբ կողմերից մեկը՝ Ադրբեջանը, պաշտոնական մակարդակով հրահանգավորում է պատմաբաններին՝ «հիմնավորելու, որ Կովկասում հայերը հայրենիք չունեն», այսինքն բացառում է տարածաշրջանում քաղաքական ինքնություն ունենալու հայ ժողովրդի իրավունքը: Իհարկե՝ ոչ: Ավելին, երբ նման «հիմնավորումներն» ու իշխանությունների ռազմաքաղաքական ձեռնարկումները սինխրոնացվում են, ապա ակնհայտ է դառնում, որ Ադրբեջանը ոչ թե փոխըմբռնման եւ խաղաղության, այլ նոր առճակատման է նախապատրաստվում:

Ո՞րն է իրականության «առեղծվածը»: Այն, որ միջազգային հանրությունը, ԵԱՀԿ ՄԽ համանախագահ երկրներն աջակցում են, որ Ադրբեջանն օրըստօրե ավելի հավակնոտություն դրսեւորի, ինչն իր հերթին բացահայտում է «առեղծվածի» իրականությունը. խնդիրը շարունակում է մնալ ռազմաքաղաքական մրցակցության հարթությունում: Մեզ համար սա բոլորովին էլ նորություն չէ: Արտառոցը եվրոպացի զանազան տրամաչափի փորձագետների եւ վերլուծաբանների կեցվածքն է, երբ, փաստորեն ակնարկելով, որ «Ադրբեջանն ավելի ուժեղ է», տեսք են ընդունում, թե «ոչինչ չեն ասում»:

**ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ**

# Էրդողանի «ճնշման» կեռքը

## Թուրքիայի վարչապետն առաջարկում է «ճնշել» Ադրբեջանին, եթե նույնը Հայաստանի հանդեպ անեն Ֆրանսիան, Ռուսաստանը, ԱՄՆ-ը

Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը հավասարակշռության, արտաքին քաղաքականության ու հակամարտությունների կարգավորման յուրօրինակ մոտեցում ունի, եթե չասենք՝ արտառոց: Թուրքիայի առաջին դեմքի ընկալմամբ, հավանական է, որ Թուրքիան փորձի ազդել Ադրբեջանի վրա այն դեպքում, երբ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երեք երկրները միասին ազդեցություն բանեցնեն Հայաստանի վրա:

Հարավային Կորեայում մի քանի տասնյակ պետությունների եւ միջազգային կազմակերպությունների ղեկավարների մասնակցությամբ Միջուկային անվտանգության հարցերով 2012թ. գագաթաժողովի առնչությամբ Սեուլ մեկնած Էրդողանը, ըստ թուրքական «Haber5» լրատվական կայքի, հանդիպել է ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի հետ: Թուրքական կայքին հղում անելով՝ «Պանորամա.ամ»-ն տեղեկացնում է, որ ավելի քան 2 ժամ տեւած հանդիպմանը կողմերը քննարկել են Իրաքին, Իրանին, Սիրիային, Լիբիային, Կիպրոսին, թուրք-ամերիկյան համագործակցությանն առնչվող հարցեր:

Սակայն արդեն հանդիպումից հետո Էրդողանը լրատվամիջոցներին հայտարարել է, թե Օբամայի հետ քննարկել են նաեւ ղարաբաղյան հակամարտությունը: Ու մինչ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրներն արտգործնախարարների մակարդակով հայտարարել են իրենց 20-ամյա գործունեության կարեւորության ու առաջընթացի մասին՝ Էրդողանը, հստակ չէ՝ ում անունից, նշել է, թե Մինսկի խմբի 20 տարիների աշխատանքներն անարդյունավետ են եղել: Ըստ իր իսկ մեջբերման՝ Էրդողանը Օբամային ասել է. «Լուծման համար, եթե պետք լինի ներգործություն ունենալ Ադրբեջանի վրա, մենք կանենք այն, ինչ մեր ուսերին է, իսկ Ռուսաստանը, Ֆրանսիան եւ դուք էլ Հայաստանի վրա ջանք թափեք»:

Բնավ էլ հասկանալի չէ, թե ինչ սկզբունքից ելնելով է Էրդողանը Ադրբեջանի վրա իր ազդեցությունը հակակշռել միանգամից երեք գերտերությունների ազդեցությամբ, այն էլ Հայաստանի վրա, բայց ակնհայտ է, որ թուրք վարչապետը (գուցե Օբամայի ականջից հեռու - Ա.Հ.) շարունակում է թուրք-ադրբեջանական թեզը՝ Մինսկի խմբի գործունեությունը փնովելու ուղղությամբ, երբ հենց Ադրբեջանի նախագահը նման գնահատական հնչեցնելու ռիսկի անգամ չի գնում:

Ամեն դեպքում, ըստ Էրդողանի, նա եւ Օբաման, ինչը հաստատապես տեղի է ունեցել՝ նկատի առնելով ժամանակահատվածն ու թուրքական նկրտումները, անդրադարձել են նաեւ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման խնդրին ու ԱՄՆ նախագահի ապրիլքսանչորսյան ուղերձին: Էրդողանն իր պարտքն է կատարել՝ Օբամային ոգեշնչելով, թե անկախ իշխանության ղեկին դեմոկրատ թե հանրապետական լինելուց ապրիլի 24-ին ընդառաջ Հայոց ցեղասպանության հարցը հայտնվում է օրակարգում: «Ամեն ապրիլին չպետք է օրակարգ գա այս հարցը», իր փոխանցմամբ՝ Օբամային ասել է Էրդողանը:

Ի դեպ, «ԻՏԱՌ ՏԱՍՍ»-ի փոխանցմամբ, Օբաման, իր հերթին, Էրդողանի հետ հանդիպումից հետո անդրադարձել է իրանական թեմային, շեշտելով, թե դիվանագիտական մեթոդներով իրանական միջուկային խնդիրը լուծելու «ժամանակավոր պատուհան» թեեւ դեռ կա, սակայն «այդ պատուհանը արդեն փակվում է»: Օբամայի տեղեկացմամբ, Միացյալ Նահանգները նաեւ «տարհամոզել» են Իսրայելին՝ չհարվածել իրանական միջուկային օբյեկտներին, շեշտադրմամբ, որ եթե դիվանագիտական ու տնտեսական պատժամիջոցները չաշխատեն, «ռազմական հարվածի հնարավորությունը կպահպանվի»:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Զարաքոլու-«Զորյան ինստիտուտ» համագործակցություն



Տորոնտոյից «Զորյան ինստիտուտի» մամլո հաղորդագրությունը տեղեկացնում է, որ մարդու իրավունքների անխոնջ պաշտպան Ռագըփ Զարաքոլուն, 2011 թվի հոկտեմբերից թուրքական բանտում գտնվելով հանդերձ, շարունակում է բացահայտել պատմական ճշմարտությունը Հայոց ցեղասպանության վերաբերյալ:

Համագործակցելով Կանադայում գործող «Զորյան ինստիտուտի» հետ, Զարաքոլուի «Բելգե Յայընլարը» հրատարակչատունը վերջերս թուրքերենով լույս է ընծայել Գերմանիայում նախապես հրատարակված Վոլֆգանգ Գուստի «1915-16 թթ. Հայոց ցեղասպանությունը: Փաստաթղթեր գերմանական արտգործնախարարության քաղաքական արխիվներից» եզակի արժեք ներկայացնող հատորը՝ Ալման Բելգելերի Սոֆըրըմը 1915-16: Ալման Դըշիշլերի Բաքանլըղը Սիասի արշիվ Բելգելերի խորագրով:




Մոտ տասը տարվա աշխատանքի արդյունք գերմաներեն հատորը պարունակում է 218 հեռագրեր, նամակներ եւ հաշվետվություններ, որոնք Օսմանյան կայսրությունում տեղակայված գերմանական հյուպատոսարանի աշխատակիցները ուղարկել են Բեռլինի արտգործնախարարության գրասենյակ: Դրանք անկեղծ խոստովանություններ են, որովհետեւ «գաղտնի», «խիստ գաղտնի» դրոշմներով են ուղարկել եւ «ներքին օգտագործման» համար են նախատեսվել: Առաջին համաշխարհայինի օրերին գերմանացի դիվանագետները անարգել կարող էին մտնել ցեղասպանություն իրականացվող վայրեր եւ այնտեղից հաշվետվություններ ուղարկել առանց գրաքննության ենթարկվելու: 1915-ի դեկտեմբերին՝ ի պատասխան տեղի գերմանացիների վրդովմունքի, թե ինչպիսի անմարդկային վերաբերմունքի են արժանանում հայերը, Գերմանիայի այդ ժամանակվա կանցլեր եւ արտգործնախարար Թեոբալդ ֆոն Բեթման Հոլվեգը գրել է. «Մեր նպատակն է Թուրքիային մեր կողքին պահել մինչեւ պատերազմի ավարտը, անկախ այն բանից՝ հայերը դրանից կտուժեն, թե ոչ»: Հայերին այդ օրերին կոչել են «Արեւելքի հրեաները»:

Վերոնշյալ հատորի թուրքերեն թարգմանությունը մոտ յոթ տարի է տեւել գերմաներեն դիվանագիտական լեզվի հարուցած դժվարությունների պատճառով:

Փաստաթղթերի ժողովածուն հրատարակվել է «Զորյան ինստիտուտի» մշակած «Գիտելիքի ընդհանուր շտեմարան» ծրագրի շրջանակներում, որը նպատակ ունի իրազեկել թուրք հասարակությանը եւ նպաստել լարվածության թուլացմանը թուրքերի եւ հայերի միջեւ:

Հ. Ծ.

# Երկրաշարժ Չիլիի կենտրոնում

Չիլիի կենտրոնական մասում կիրակի երեկոյան (Երեւանի ժամանակով՝ երկուշաբթի առավոտյան) տեղի է ունեցել 7,2 մագնիտուդով երկրաշարժ: ԱՄՆ երկրաբանական ծառայության տվյալներով, ցնցման էպիկենտրոնը եղել է Տալկա քաղաքից 27 կմ հյուսիս-արեւմուտք: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:

Տալկան գտնվում է մայրաքաղաք Սանտյագոյից 255 կմ հարավ եւ ունի 193 հազար բնակիչ: Տուժածների եւ ավերածությունների վերաբերյալ տեղեկություններ չկան: Ցունամիի վտանգ չի եղել, սակայն իշխանությունները ծովափնյա բնակչությանը խորհուրդ են տվել կարճ ժամանակով բարձրանալ ապահով տեղեր:

Տալկան 2010-ի փետրվարյան երկրաշարժից առավել շատ տուժած քաղաքներից մեկն է: Այն ժամանակ 8,8 մագնիտուդով երկրաշարժից եւ դրա առաջացրած ցունամիից զոհվել էր առնվազն 800 մարդ: Տարերքը պատճառած նյութական վնասը գնահատվել էր տասնյակ միլիոնավոր դոլարներ:

ՍԻՐԻԱ

# Մարտեր Հոմսում եւ Շաhիաքում



Սիրիայի կառավարական զորքերը եւ խռովությունների ճնշման հատուկ կազմավորումները Հոմս քաղաքում մարտեր են ծավալել այնտեղ թափանցած գրոհայինների մի մեծ խմբի դեմ: Սիրիական զինվորական աղբյուր վկայակոչելով, ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը հաղորդում է, որ զինված ծայրահեղականների ոչնչացման գործողությունն իրականացվում է Հոմսի կենտրոնում՝ Բաբ-Աբաա, Սաֆսաֆա, Ուարշա թաղամասերում եւ Սուկ էլ Հաշիշում:

Փողոցային մարտերի ընթացքում սպանվել եւ գերի են վերցվել տասնյակ գրոհայիններ: Կորուստներ են կրում նաեւ կառավարական զորքերը: Տեղ-տեղ գնդակոծության տակ հայտնվել են խաղաղ բնակիչներ:

«Ալ Արաբիա» հեռուստաալիքը հաղորդում է, որ սիրիական զորքը երկուշաբթի առավոտյան սկսել է տանկերից գնդակոծել Հոմսի կենտրոնական շրջանները: Զորքերը կռվում են ոչ միայն գրոհայինների, այլեւ նրանց կողմն անցած դասալիք զինվորների դեմ:

Առավել կատաղի բախումներ են տեղի ունենում Հորդանանին սահմանակից Լահիաթ բնակավայրում: Դեյր էզ Զորում խուզարկություններ են կատարվում ընդդիմությանը ենթակա բնակելի թաղամասերում: Ձերբակալություններ են սկսվել Դամասկոսի արվարձան Քաբունում, որտեղ առավել ակտիվ են իսլամիստները:

# Ֆելդմարշալ Թանթաուին պատասխանեց իսլամիստների վերջնագրին

Եգիպտոսի զինված ուժերի բարձրագույն զինվորական խորհրդի ղեկավար Մուհամմադ Հուսեյն Թանթաուին խիստ քննադատության է ենթարկել վերջերս «Մուսուլման եղբայրների» բռնած դիրքը: Իսլամիստները, որոնք երկար ժամանակ խուսափում էին զինվորականների հետ առճակատումից, այժմ պահանջում են, որ կառավարություն ձեւավորի ոչ թե բանակը, այլ խորհրդարանական կոալիցիան:

Երկրի զինվորական ղեկավարությունը «սաստիկ վրդովմունք» է արտահայտել նման պահանջների առնչությամբ: «Մենք կոչ ենք անում սովորել պատմական նախադեպերից, ղեկավարվելով համագործակցության ոգով», ասվում է Բարձրագույն զինվորական խորհրդի հայտարարության մեջ:

Ավելի վաղ՝ մարտի 24-ին «Մուսուլման եղբայրներ» իսլամիստական կուսակցությունը Քամալ Գանզուրիի կառավարությանը բնութագրել էր որպես «խորտակիչ ձախողում»: Իսլամիստները նշել էին, որ կառավարությունը չկարողացավ լուծել Եգիպտոսի առջեւ ծառացած խնդիրներից ոչ մեկը: Իսլամիստները հատկապես ընդգծել էին ներքին անվտանգության ոլորտում տիրող վիճակը եւ բարեփոխումների տեղատվությունը: Այդ մասին հաղորդում է newsru.co.il կայքէջը:

Իսլամիստների կարծիքով, զինվորականներից կառավարության ստացած աջակցությունը վկայում է, որ նախագահ Հոսնի Մուբարաքի տապալումից հետո երկրում ոչինչ չի փոխվել: «Նրանք, ովքեր փորձում են նոր կերպարանքով վերստեղծել հին վարչակարգը, պետք է իմանան, որ ժողովուրդը պատրաստ կլինի նոր կայք հաղորդել հեղափոխությանը, խլելով նավի ղեկը անպատասխանատու ձեռքերից», հայտարարում են իսլամիստները:

# Սանտորումի տեսահոլովակը Օբամային համեմատում է Ահմադինեժադի հետ

Հանրապետական կուսակցությունից ԱՄՆ նախագահության թեկնածու, Փենսիլվանիայի նախկին սենատոր Ռիկ Սանտորումի նախընտրական տեսահոլովակում նախագահ Բարաք Օբամայի պատկերը գրեթե աննկատելիորեն փոխարինում է Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադի պատկերին: Տեսահոլովակը համացանցում տեղադրել է Սանտորումի նախընտրական շտաբը:

«Օբամավիլ» (Obamaville) վերնագրված տեսահոլովակում ներկայացվում է ապագան՝ առաջիկա ընտրություններում Օբամայի հաղթանակի դեպքում: Գործողությունը տեղի է ունենում 2014 թվականին: Տեսահոլովակում մասնավորապես երեւում են ամայացած փողոցներ ու մանկական խաղահրապարակներ, ինչպես նաեւ օգտագործվում է Մեծ լճացման ժամանակների լուսանկար հիշեցնող աղջնակի կերպարը:

Ահմադինեժադի դրվագը ըստ երեւույթին ամերիկացիներին պետք է հիշեցնի Իրանի վտանգավորությունը, երբ նա միջուկային զենք ունենա: Հանրապետականները եւ մասնավորապես Սանտորումը Օբամային մեղադրում են Թեհրանի նկատմամբ մեղմ քաղաքականություն վարելու մեջ, քանզի Իրանի միջուկային ծրագրի հարցում նա առայժմ սահմանափակվում է քաղաքական ճնշումներով եւ տնտեսական պատժամիջոցներով:

«Լոս Անջելես թայմս» թերթը նշում է, որ «Օբամավիլը» ամերիկացիներին ակնհայտորեն պետք է հիշեցնի «գուվերվիլ»-ների՝ Մեծ լճացման տարիների չքավորական հետնախորշերի մասին: Դրանք այդպես էին կոչվում այն ժամանակվա նախագահ Հերբերտ Գուվերի (1929-1933) անունով, որին շատերը մեղավոր էին համարում տնտեսական ճգնաժամի համար:

Ներկայումս Սանտորումը նախագահական ընտրարշավում հանրապետականների մյուս ուժեղ թեկնածուի՝ Մասաչուսեթսի նախկին նահանգապետ Միթ Ռոմնիի գլխավոր մրցակիցն է:

## Մշակույթ

# Աններշնչանք ժամանակների թելադրանքը

Ֆրիմոնթում (ԱՄՆ) լույս է տեսել ամերիկահայ բանաստեղծ **Զարեհ Մելքոնյանի «Մորմոքը՝ տարբաղադրուող երազներուն»** ժողովածուն («Yerevan» հրատ.), Թեքեյան մշակութային միության Լոս Անջելեսի մասնաճյուղի հովանավորությամբ՝ մատենաշարի թվով 13 հրատարակությունը, Վաչե Սեմերճյանի խմբագրությամբ, ձեւավորումը՝ Մինաս եւ Նազելի Գոճայանների: «Զարեհ Մելքոնեան. Զարտուղի բանաստեղծը հայ գրականութեան» խորագրով Երվանդ Ազատյանի առաջաբանում գրականագետը մասնավորից ընդհանրացնողի իրեն բնորոշ ձեռագրով ներկայացնում է Զարեհ Մելքոնյանի մտավորական գործունեությունը եւ բանաստեղծական դիմանկար ստեղծում՝ ստեղծագործական զարգացումների առանձին շրջաններով, ըստ բանաստեղծական ժողովածուների եւ դրանց յուրաքանչյուրին բնորոշ առանձնահատկությունների ու փոփոխությունների: Ինչպես Ե. Ազատյանն է նկատում, սփյուռքյան պայմաններում քչերն են կարողանում մնալ գրական պատնեշի վրա: Զարեհ Մելքոնյանը սփյուռքահայ գրականության նահապետն է: Այս տարի նա հատում է 90-ի սահմանը, 70 տարի գրական-մտավորական պատնեշի վրա է՝ այդ աշխարհ մուտք գործած 1943 թվականից, «Ես եւ մարդիկ» անդրանիկ ժողովածուով: Իր գործունեությունը սփյուռքահայ կյանքի ամենակարեւոր ասպարեզի՝ կրթության մեջ նույնպես բարեբեր պտուղներ է տվել՝ ազգապահպանման ջահակիրների թվում նրան դասելով:

Ծնվել է Սիրիայում, 1922-ին, ավարտել Հայկազյան ազգային նախակրթարանը, սովորել Մխիթարյան վարժարանում, ապա Մելգոնյան կրթական հաստատության մանկավարժական բաժնում: Տեղափոխվելով Բեյրութ՝ սովորում է տեղի Ամերիկյան համալսարանում: Որպես մանկավարժ աշխատել է ՀԲԸՄիության Հովակիմյան-Մանուկյան եւ Դարուհի Հակոբյան երկրորդական վարժարաններում, տարբեր տարիների համապատասխանաբար նաեւ փոխտնօրենի եւ տնօրենի պաշտոններ է վարել: 1968-ին տեղափոխվել է Մ. Նահանգներ, շարունակել մանկավարժական, ազգային, գրական գործունեությունը. վարիչ-տնօրենն էր ՀԲԸՄ Ամերիկայի Միջին-արեւմտյան շրջանի, վարիչ քարտուղարն էր Ալեք Մանուկյան մշակութային հիմնադրամի, գործադիր տնօրենն էր Միության Հյուսիսային Ամերիկայի դպրոցների ծրագրի, հայերեն է դասավանդել Միչիգանի համալսարանում: Բեյրութում նա խմբագրել է նաեւ «Շիրակ» գրական հանդեսը:

Զարեհ Մելքոնյանը ստեղծագործում է գրական ամենատարբեր ժանրերում՝ բանաստեղծություն, թատերգություն, գրադատություն, հուշագրություն, հրապարագրություն, միաժամանակ նա 4 անուն դասագրքերի հեղինակ է, այդ թվում՝ «Քերականութիւն արդի հայերէնի» եռահատորյակի: Վերջին տարիներին աշխատում է սփյուռքահայ կյանքը ներկայացնող բազմահատոր վիպաշարի վրա:

«Մորմոքը՝ տարբաղադրուող երազներուն» գիրքը բանաստեղծությունների 12-րդ ժողովածուն է, որին նախորդած «Ես եւ մարդիկ», «Երջանկութիւն», «Ափերը մինչեւ անկարելիին», «Լեռներ վիհերու մէջ», «Ծնծղաները ոչինչին», «Կեանքով ու մասամբ նորին», «Բաւիղէ բաւիղ», «Հոն դէպի», «Առանձնութեան ժխորին մէջ» հատորներից ընտրված մի քանի բանաստեղծություններ ընդգրկված են այս վերջին ժողովածուի «Յաւելուած» բաժնի մեջ, որով նրա նախընթաց ստեղծագործությունների մասին որոշ ծանոթություն եւ պատկերացում է ստեղծվում, եւս մի քանի բանաստեղծություն՝ անգլերենով:

*«Մելքոնեանի բանաստեղծութիւնը չէ ապաւինած իրիկնամուտի, շողի, ու կանաչի, այլապէս ալ բանաստեղծական ու հէշտ միջոցներուն: Անոր քերթողութիւնը վերացական է այն իմաստով, որ վերացարկել գիտէ գեղեցկութիւնը կեանքի իրականութիւններէն՝ առանց զայն անընկալելի ընծայելու, ինքնատիպ դարձնելու:*

*Ան նոյնպէս չէ կռթնած դարերով քերթողութեան արհեստին մէջ յոգնած ու պատկերներ չկարենալ ստեղծելու վրիպանքին դիակը շալկած եւ մեր քերթողութեան անտէր անդաստաններուն մէջ թափառող բառերուն: Ան ունի իր բառամթերքը՝ պահին, զգացումին, քերթուածին ու գաղափարին յատուկ ստորոգելիներով, զորս բառարանէն պահուել կարելի չէ երբեք, ոչ ալ՝ կրկնել զանոնք այլուր:*

*Մելքոնեան նոյնպէս խախտած է բանաստեղծութեան դասական չափերը, կշռոյթի ընկալեալ եւ ծոյլ օրէնքները, իր գրիչէն ցայտող ներշնչումը քանդելու եւ թանձրացնելու համար կաղապարի մը մէջ, որ ԻՐՆ է անփոխելի կերպով:*

*Ինչ որ յատկանշական է մանաւանդ, բանաստեղծին այս գիրքով իրագործուած նուաճումին համար՝ նորարարութեան ոգին է, իր յաւիտենական իմաստով: Ոչ այն նորարարութիւնը, որ անպայման ընկալեալին չափանիշները խորտակելուն մէջ երջանիկ յաջողութեան մը ինքնագոհ ակնկալութիւնը ունի. այլ նորարարութիւն մը, որ նախ՝ հաղորդ է այսօրուան աշխարհի հեւքին ու թափին եւ արուեստի բնագաւառէն ներս անոնց գտած արտացոլման»,* գրադատի անաչառ հայացքով Զարեհ Մելքոնյանի բանաստեղծական խորքերն է թափանցում Երվանդ Ազատյանը:




... Ասես հսկող մի աչք դիտակետի բարձունքից զարմանալի ամբողջականությամբ ընդգրկում է իր ժամանակը՝ ակամայից դառնալով տխուր արձագանքողը մարդու բարոյական անկումի: Ազատության հռչակագրի՝ մարդու կողմից տարընթերցումը նրան կանգնեցրել է սահմանային եզրագծերին. բանաստեղծը միտումով խտացնում է գույները: Ստեղծագործության քննական ոգին պրպտում ու բացում է բազմաթիվ մութ ծալքեր՝ չնայած թվում է նաեւ գոց տեղ չկա այլեւս, ազատությունը անպարկեշտության աստիճանի մերկացրել է ամեն հնարավորը մարդկային կյանքի. քաղաքական աշխարհը վաղուց առքուվաճառք ու շահ է, դիմակահանդեսը վաղուց ավարտված է, մարդու եսամոլությունը քանդել է հին ու բարի ավանդույթների վերջին մնացորդները, փլվել են կամուրջները, XX դարի հեղափոխությունները՝ մշակութային, մարմնային ու սոցիալական, հիմնավոր ու ասես վերջնականորեն աղավաղել են աշխարհի պատկերը: Զարեհ Մելքոնյանի բանաստեղծական ռեալիզմի սպանիչ հեգնանքը նկարագրականության հարթությունից այն տեղափոխում է խոհազգացական ոլորտ՝ տեսողական վիճակները վերածվելով հոգեբանական դրամայի: Բանաստեղծը վերապրում է ժամանակն ու բարքերը. ափսոսանքը, ցավը ակնհայտորեն հոսում են տողատակերից՝ հեգնանքն ու դեղին հումորը՝ նույնպես:

Գեղագիտություն կամ նուրբ քնարականություն փնտրողի հայացքը կարկամելու է այս տողերի վրայով անցնելիս, դասական զգացականության նրանց ճաշակը մի պահ վարանելու է կամ վիրավորվելու, թե ինչու է բանաստեղծը սիրային լիրիկան փոխարինել սեռային նատուրալ նկարագրություններով, կամ ինչպես կարոտի ծանոթ զգացումը բառային այլ չափանիշների մեջ այլ խորություններ է ստացել, եւ ամենակարեւորը՝ խորհրդավոր խորհուրդների կամ իլյուզիաների համար այս բանաստեղծության մեջ տեղ չկա: Սա այսօրվա ժամանակն է՝ որքան բարդ ու խճճված, նույնքան պարզեցված ու կոպիտ. «կասկածելի դարաշրջանի մասին» մտածումները բառաձեւերի չափից ավելի նատուրալ պատկերներ են ստեղծում, բանաստեղծը կյանքի ամեն շերտ, յուրաքանչյուր երեւույթ, ամեն նյութ իր գրչին է ենթարկում՝ ազգություն ու լեզու, կրոն ու բարոյականություն, հիվանդություն, ցավ, մորմոք ու ծերություն, սեռամոլություն, միասեռություն ու թմրամոլություն, մշակույթների բախումներ ու պատերազմներ, հոգեւոր ու մարմնային այլակերպումներ: Աշխարհի հեւքը, մարդու խելահեղ վազքի ահագնացող դրաման, որի բանաստեղծական արտահայտությունը խտացված է «Անաւարտ երազ մը շատ վտանգավոր» ապոկալիպտիկ պատկերաշարում, նախընթացի խտացումն է, որտեղ ֆիլմի կադրեր հիշեցնող դրվագներով ներկայացվում է կործանվող աշխարհի ողբերգության սկիզբը՝ մարդու հուսահատ խուճապը:

*Եւ ամէն կողմ Խուճա՛պ կար*
*Ու Ժխո՛ր անսպառ...*
*Ու ես, տիրող այդ ԽՈՒՃԱՊԻՆ մէջ ու ԺԽՈ՛Րին,*
*Ու ծուխի՛ն՝*
*Զարմանազան ինքնաշարժներու...*
*Եւ ամէ՛ն ուղղութեամբ փչող ապականա՛ծ տա՛ք հովերու,*
*Եւ ամէն կողմէ հնչող ահագնագոռ որոտումներու,*
*Ու կրկնուող Երկրաշարժային ցնցումներու...*

Զարեհ Մելքոնյանի բանաստեղծության ազգային երակը տրոփում է մշտական անհանգստությամբ՝ ազգային երկատված ճակատագրի դառնության բաժակը նա խմում է ցմրուր: Տարամքնոլորտ կյանքի ապրվող ամեն զգացում, ամեն ծնված նոր միտք հայության անցյալով ու ներկայով է իմաստավորվում: Նա՝ որ ապրում է ժամանակի օտարության հոգեկան տիրույթում, կարծես դիտորդ է մեկուսի կանգնած, անմասնակիցը աղմուկի չարաղետ այդ «փիլիսոփայության»: Սակայն ահա մայրենին, որ ոչ թե մասն է իր, այլ ամբողջական էությունը, մերթ իբրեւ տեսիլք է, մերթ մերձ-իրական հայտնվող հայրենիք հոգեւոր, նրա անցյալի, ներկայի եւ շարունակության միակ պատվարը, եւ որի՝ մեսրոպյան գրաբարյանի ներբողողն է դառնում այս վերջին ժողովածուի վերջին բանաստեղծությամբ՝ թղթի ճերմակին թողնելով այս տողերը.

*Ինք ուրկէ՞ գտաւ յանկարծ այդ մշակեա՛լ*
*Ու բա՛րդ, ու շքե՛ղ Հայերէ՛ն Լեզո՛ւն «ԳՐԱԲԱ՛Ր»...*
*Մաշտոցը, արդեօք այդ Լեզո՛ւն էր գտա՞ծ*
*Աւերակներո՛ւն մէջ Հա՛յ Քրմական տաճարի՞ մը դարաւոր...*
*ԼԵԶՈ՛Ւ, որ կը պատկանէր ՈՒՐԻ՞Շ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ-Ի Մը, որ*
*Անհետացա՛ծ էր Հայաստանէ՛ն՝*
*Յանկա՛րծօրէն*
*Պատճառո՛վ մը խորհրդաւո՛ր...:*
*Մաշտո՛ցն ու իր գործակիցները չէի՛ն կրնար*
*Իրե՛նք, տեղւոյն վրայ՝ Գրաբարին նման «անցեա՛լ»*
*Ունեցող» հարո՛ւստ լեզո՛ւ մը «հնարա՞ծ» ըլլալ...*
*ԼԵԶՈ՛Ւ, որ ի՛ վիճակի ըլլար*
*Սուրբ Գիրքի թարգմանութիւնը առաջի՛ն, վերածելո՜ւ իսկոյն՝*
*«Թագուհի՛ն Թարգմանութիւններուն»...*

**ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ**

---

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀՈՒՄ

# Ուկրաինայի նկարիչների ցուցահանդեսը



**Ինչպես արդեն տեղեկացրել էինք «Ազգի» ընթերցողներին, մեկնարկել է «Ուկրաինայի մշակույթի օրերը» Հայաստանում: Ազգային պատկերասրահում բացվեց գեղանկարչական ցուցահանդես, որում ներկայացված էր Ուկրաինայի նկարիչների ազգային միության հավաքածուից արժեքավոր գործեր: Ցուցանմուշներում տեղ էին գտել ուկրաինական գեղանկարչության անվանի վարպետներ Վ. Բարինովա-Կուլեբայի, Ս. Գրիգորեւի, Ա. Կաշշայի, Օ. Յաբլոնսկայայի ստեղծագործություններից, որոնք դասական կերպարվեստի նմուշներ են: Ցուցադրությունը ներկայացնում է տարբեր սերունդների նկարիչների, ովքեր երբեմն հակադիր են իրենց փիլիսոփայությամբ եւ ստեղծագործական միտումներով:**

**«Ներկայացված 30 գործերում նկատելի է մեկ ընդհանուր գիծ՝ դրանք իրականացված են բարձր վարպետությամբ, ինչը ժամանակաշրջանի կերպարվեստի յուրատեսակ այցեքարտն է, որը պայմանավորել է նրանց վաստակած մեծ համբավը», այսպես բնորոշեց ցուցանմուշները «Ազգի» հետ զրույցում Ուկրաինայի նկարիչների միության փոխնախագահ Միկոլա Կիշչուկը: Նա նաեւ նշեց. «Վստահ ենք, որ հայ հանդիսականը նոր անուններ կհայտնաբերի եւ լիարժեքորեն կգնահատի ներկայացված գործերից յուրաքանչյուրը»:**

**Ցուցահանդեսի բացմանը ներկա էին եւ ելույթներ ունեցան Ազգային պատկերասրահի տնօրեն Փարավոն Միրզոյանը, ՀՀ Նկարիչների միության նախագահ Կարեն Աղամյանը, մշակույթի փոխնախարար Արեւ Սամուելյանը: Միկոլա Կիշչուկը հաստատեց հնչած բոլոր այն կարծիքները, որ մշակույթը լավագույն միջոցն է ժողովուրդներին մտերմացնելու, համագործակցելու խնդրում: Նա սրտանց հրավիրեց հայ նկարիչներին այցելել Ուկրաինայի նկարիչների միության չորս ստեղծագործական տներ ու թարմացնել նախկինում դրսեւորված ջերմ ու մտերմիկ կապերը:**

**«Լավագույն գործերի ցուցադրման ավանդույթը շարունակվում է՝ ժամանակակից հայ հանդիսականի պատկերացումները Ուկրաինայի կերպարվեստի, ուկրաինացի արվեստագետների ձեռքբերումների եւ ազգային գանձարանում վերջիններիս ներդրման վերաբերյալ: Հույս ունենք, որ այս ցուցահանդեսը իրական գեղագիտական հաճույք կպարգեւի այցելուներին», ասաց ՀՀ-ում Ուկրաինայի դեսպան Իվան Կուխտան:**

**Տեղեկացնենք, որ ցուցահանդեսը կգործի երկու շաբաթ:**

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**

# Հայերենի դասընթացներ Դիարբեքիրում

**Դիարբեքիրի Սուրի քաղաքապետարանի նախաձեռնությամբ քրդերենի դասընթացներից բացի այս քաղաքում կազմակերպվել են նաեւ հայերենի դասընթացներ, որոնք անցկացվում են քրդերենի հետազոտության եւ զարգացման հիմնարկի տրամադրած սրահում: Շուրջ 40 մարդ հայերեն է սովորում Պոլսի հայ համայնքի կողմից ուղարկված ուսուցչի ղեկավարությամբ, տեղեկացնում է Փարիզի «Նոր Յառաջ» թերթը: Ինչպես քաղաքապետն է ներկայացրել, որոշվել է գործել բազմալեզու փորձարարության սկզբունքով: «Ինչ որ ցանկանում ենք մեզ, ցանկանում ենք նաեւ այլոց համար: Այս մեկը ժողովրդավարության անշրջանցելի պայման է: Հետեւաբար եթե ես քրդերի համար մայրենի լեզվով կրթության իրավունք եմ պահանջում, նույնը պետք է պահանջել նաեւ հայ, ասորի եւ մյուս ժողովուրդների համար», ասել է նա:**

**Ս. Բ.**

ԱԶԳ

Մարզական

# Ռաֆայել Նազարյան. «Յուրաքանչյուր խաղում պայքարելու ենք 3 միավորի համար»

Երեկ «Բանանցի» մարզադպրոցում թիմի եւ Հայաստանի երիտասարդական հավաքականի գլխավոր մարզիչ **Ռաֆայել Նազարյանը** հանդիպեց լրագրողներին: Նա նշեց, որ թիմը լրջորեն է նախապատրաստվել նոր մրցաշրջանին, գոհ է նախապատրաստական փուլից, թեեւ «Բանանցը» ստուգողական հանդիպումներում հիմնականում պարտվել է: Սակայն իրեն գոհացնում է մարզումների նկատմամբ ֆուտբոլիստների դրսեւորած պատասխանատու վերաբերմունքը:


ՖՈՏՈԼՈՒՐ

Նոր մրցաշրջանում «Բանանցի» կազմում միայն մեկ լեգեոնական է ընդգրկված, թիմը համալրել է արարատցի Գեւորգ Կարապետյանը, իսկ մնացած ֆուտբոլիստները սեփական կադրերն են: Ռաֆայել Նազարյանը նշեց, որ դա ֆինանսների հետ որեւէ կապ չունի: Այդ առումով «Բանանց» ակումբը որեւէ խնդիր չունի: Պարզապես փոխվել է քաղաքականությունը եւ ակումբի ղեկավարությունը որոշել է հիմնական շեշտը դնել սեփական մարզադպրոցի երիտասարդ կադրերի պատրաստման վրա: Գլխավոր մարզիչն ուրախ է դրա համար ու հույս ունի, որ մոտ ապագայում երիտասարդ ֆուտբոլիստներն իրենց մասին խոսել կտան: Ապագայում «Բանանցն» էլ «Փյունիկի» օրինակով կարող է իր լավագույն ֆուտբոլիստներին արտերկիր գործուղել:

Ըստ Ռաֆայել Նազարյանի, թիմի առջեւ նոր մրցաշրջանում կոնկրետ խնդիր դրված չէ: Սակայն «Բանանցը» միշտ էլ պայքարել է մրցանակային տեղերի համար ու այս տարի էլ ձգտելու է լրջորեն պայքարել առաջնության մեդալների համար: Թե ինչ կստացվի, ցույց կտա առաջնության ընթացքը: Ամեն դեպքում թիմը խաղադաշտ է դուրս գալու յուրաքանչյուր խաղում 3 միավոր վաստակելու վճռականությամբ: Բացի այդ, աշխատելու են բարձրացնել ֆուտբոլիստների կատարողական վարպետությունը: Ռաֆայել Նազարյանի կարծիքով բոլոր թիմերն էլ լավ են նախապատրաստվել նոր մրցաշրջանին, ուստի սպասվում է համառ պայքար առաջնության մեդալների համար: Ճիշտ է, որոշակի առավելություն կարող է ունենալ «Ուլիսը», որի կազմում մեծ թիվ են կազմում փորձառու ֆուտբոլիստները:

Ռաֆայել Նազարյանը խոսեց նաեւ Հայաստանի երիտասարդական հավաքականից, որը նախապատրաստվում է Եվրոպայի առաջնության ընտրական հերթական մրցախաղերին: Նա նշեց, որ ցավոք մինչեւ Անդորրայի հավաքականի հետ կայանալիք ընտրական մրցախաղը երիտասարդական հավաքականն ընկերական որեւէ հանդիպում չի անցկացնի: Գլխավոր մարզիչը հույս հայտնեց, որ մինչեւ Ուելսի հետ ընտրական հաջորդ հանդիպումը ընկերական խաղ կկազմակերպվի:

Մինչեւ Անդորրայի հավաքականի հետ հանդիպումը դեռեւս բավականին ժամանակ կա ու Ռաֆայել Նազարյանը հետեւելու է թեկնածուների ելույթներին: Արտերկրում հանդես եկող Մասիս Ոսկանյանի եւ Գեւորգ Բադալյանի ելույթներին նա հետեւում է տեսագրություններով: Առաջնության հանդիպումները թույլ կտան գործի մեջ տեսնելու հավաքականի թեկնածուներին ու որոշելու կազմը:

## Հանդբոլիստուհիներն անհաջող ելույթ ունեցան

**Բուլղարիայում անցկացված «Չելենջ տրոֆի» հանդբոլի միջազգային մրցաշարում Հայաստանի հանդբոլիստուհիներն անհաջող հանդես եկան՝ 8 թիմերի մրցավեճում զբաղեցնելով 7-րդ տեղը:**

**B խմբում ընդգրկված հայ հանդբոլիստուհիներն առաջին տուրում լատվիացիներին զիջելուց հետո պարտվեցին նաեւ Բուլղարիայի (12-53) եւ Մոլդովայի (16-26) ընտրանիներին: Բուլղարացիների հետ մրցավեճում մեր թիմից 8 գոլի հեղինակ դարձավ Լիանա Գրիգորյանը, 3 գնդակ խփեց Կլարա Թերզյանը, մեկ անգամ էլ աչքի ընկավ Լուսինե Մխիթարյանը:**

**Մոլդովացիների հետ խաղում առաջին խաղակեսից հետո մերոնք առջեւում էին 11-8 հաշվով: Սակայն ընդմիջումից հետո նրանց չհաջողվեց պահպանել առավելությունը: Այսպիսով, B խմբում Հայաստանի հավաքականը գրավեց վերջին՝ 4-րդ տեղը: 7-8-րդ տեղերի համար մրցավեճում հայ հանդբոլիստուհիները ուժերը չափեցին A խմբում 4-րդ տեղը գրաված Մալթայի ընտրանու հետ: Մեր հավաքականին հաջողվեց հաղթել 22-10 հաշվով: Թիմի կազմում լավագույնը Ֆրանսիայում բնակվող Կլարա Թերզյանն էր, որը 9 անգամ գրավեց մրցակցի դարպասը: Գոլերի հեղինակներ դարձան նաեւ Անի Ասատրյանը (4), Լուսինե Մխիթարյանը (3), Լիանա Գրիգորյանը (2), Լուիզա Թուխիկյանը (2) եւ Մերի Վահանյանը (2):**

## Վերջին փորձամրցումները

Ինչպես հայտնի է, հանգստյան օրերին նախատեսված էր ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության մեկնարկը: Սակայն մեկնարկային տուրը հետաձգվեց եղանակային անբարենպաստ պայմանների պատճառաբանությամբ: Այնպես որ թիմերից ոմանք ստիպված էին ընկերական հանդիպում անցկացնել:

Աշտարակում ուժերը չափեցին «Իմպուլսն» ու «Արարատը»: Հանդիպման ելքը վճռվեց 56-րդ րոպեին արարատցի Կարեն Ն. Խաչատրյանի խփած միակ գոլի շնորհիվ:

«Բանանցի» մարզաբազայում մրցեցին «Շիրակն» ու «Բանանցը»: Այդ խաղում «Շիրակը» հաղթեց 4-0 հաշվով: Շիրակցիներից գոլերի հեղինակներ դարձան Դամ Դիոպը, Տիգրան Դավթյանը, Արա Մկրտչյանն ու Բեկոն:

«Փյունիկն» էլ սեփական մարզաբազայում մրցեց դուստր թիմի՝ «Փյունիկ-2-ի» հետ: 5-2 հաշվով հաղթեցին ավելի փորձառու «Փյունիկի» ֆուտբոլիստները: Նրանցից գոլերի հեղինակներ դարձան Վարդան Բակալյանը, Ղուկաս Պողոսյանը, Դավիթ Մանոյանը, Արտակ Եդիգարյանն ու Արթուր Յուզբաշյանը: «Փյունիկ-2-ից» աչքի ընկան Արման Հովհաննիսյանն ու Գոռ Մալաքյանը:

Երկրի չեմպիոն «Ուլիսն» էլ նախընտրեց երկկողմանի խաղ անցկացնել, որին մասնակցեցին թիմի բոլոր ֆուտբոլիստները, բացառությամբ վնասվածք ունեցող Ալբերտ Թադեւոսյանից: Վնասվածքից հետո ապաքինվել է ուլիսցի Արթուր Քոչարյանը, որը թիմի կազմում նախապատրաստվում է ապրիլի 1-ին «Գանձասարի» հետ կայանալիք առաջնության մեկնարկային խաղին:

## Մեքսիկացի ավտոմրցարշավորդն անակնկալ մատուցեց



«Ֆորմուլա-1» դասի ավտոմրցավազքի աշխարհի առաջնության հերթական փուլն անցկացվեց Մալայզիայում: Այն ավարտվեց «Ֆերարի» ավտոմրցարշավորդ Ֆեռնանդո Ալոնսոյի հաղթանակով: Նա մրցատարածությունը հաղթահարեց 2 ժամ 44,51 րոպեում: Ալոնսոն մարզական իր կարիերայում 3-րդ անգամ հաղթող ճանաչվեց Մալայզիայի Գրան պրիի խաղարկությունում:

Մեծ անակնկալ մատուցեց մեքսիկացի երիտասարդ ավտոմրցարշավորդ Սերխիո Պերեսը՝ զբաղեցնելով 2-րդ տեղը: Լավագույն եռյակը եզրափակեց Լյուիս Հեմիլտոնը:

2 փուլերի ընդհանուր հաշվարկով աշխարհի առաջնության աղյուսակը 35 միավորով գլխավորում է Ֆեռնանդո Ալոնսոն: 30 միավորով 2-րդ տեղում Լուիս Հեմիլտոնն է, որին 5 միավոր է զիջում եռյակը եզրափակող Ջենսոն Բատոնը:

«Կոնստրուկտորների գավաթի» մրցաշարում 55 միավորով առջեւում «Մակլարենն» է: 2-րդ տեղը զբաղեցնում է «Ռեդ Բուլը» 42 միավորով: Եռյակը 35 միավորով եզրափակում է «Ֆերարին»:

ՍԵՂԱՆԻ ԹԵՆԻՍ

## Տղամարդկանց հավաքականը հաղթանակով մեկնարկեց

**Սեղանի թենիսի Հայաստանի տղամարդկանց հավաքականը հաջող մեկնարկեց Դորտմունդում ընթացող աշխարհի թիմային առաջնությունում: Մեկնարկային խաղում մեր թենիսիստները 3-0 հաշվով պարտության մատնեցին Նիկարագուայի հավաքականին: Մեր հավաքականի անդամներ Մեսրոպ Ղուկասյանը, Ալեքսանդր Դիարյանն ու Մուրադ Ասատրյանը հաղթեցին մրցակիցներին: Հայաստանի տղամարդկանց հավաքականն ընդգրկված է 4-րդ խմբի N ենթախմբում: 2-րդ տուրում մեր թենիսիստները կմրցեն ղազախների հետ, որոնք մեկնարկային խաղում 3-0 հաշվով պարտության են մատնել ադրբեջանցիներին:**

**Ի տարբերություն տղամարդկանց, ՀՀ կանանց հավաքականն անհաջող է մեկնարկել 3-րդ խմբի K ենթախմբում: Առաջին մրցախաղում հայ թենիսիստուհիները 0-3 հաշվով պարտվեցին Իռլանդիայի մարզուհիներին: Ընդ որում բոլոր 3 մրցախաղերն էլ անցան համառ մրցապայքարում: Հաղթողին որոշելու համար հարկ եղավ 5 մրցափուլ անցկացնել: Հասմիկ Խաչատրյանը, Լուիզա Նազարյանն ու Ռուբինա Վարդանյանն իրենց մրցակցուհիներին զիջեցին միեւնույն 2-3 հաշվով: 2-րդ խաղում էլ մեր հավաքականը պարտվեց 0-3 հաշվով: Մրցակիցը Կանադայի ընտրանին էր, որի կազմում հանդես էին գալիս չին թենիսիստուհիներ: 3-րդ տուրում հայ թենիսիստուհիների մրցակիցը կլինի Մոնղոլիայի հավաքականը:**

## Մխիթարյանն ընդգրկվել է հեռանկարային ֆուտբոլիստների տասնյակում

**Bleacherreport.com կայքը կազմել է մինչեւ 23 տարեկան այն տաղանդավոր ֆուտբոլիստների տասնյակը, որոնց մասին արեւմուտքի երկրպագուները քիչ են տեղեկացված: Այդ ցանկում ընդգրկված է նաեւ Հայաստանի ազգային հավաքականի եւ Դոնեցկի «Շախտյորի» կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանը:**


ՖՈՏՈԼՈՒՐ

**Ամերիկյան կայքը Մխիթարյանի խաղը համեմատել է Լոնդոնի «Չելսիի» «աստղերից» մեկի՝ Ֆրենկ Լեմփարդի հետ, նշելով գնդակի հետ վարվելու, ճշգրիտ փոխանցումներ կատարելու եւ միջին գիծը հարձակման հետ կապելու հայ ֆուտբոլիստի հիանալի հատկությունները:**

**Օրերս Մխիթարյանը «Շախտյորի» հերթական խաղում վնասվածքի պատճառով փոխարինվել էր: Բուժզննությամբ պարզվել է, որ նրա մեջքի մկանն էր ձգվել:**

## Հայ 3 շախմատիստներ առաջատարների խմբում են

Բուլղարիայի Պլովդիվ քաղաքում ընթացող շախմատի Եվրոպայի տղամարդկանց անհատական առաջնության 6-րդ տուրից հետո հայ շախմատիստներից լավագույն արդյունքն ունեն Հրանտ Մելքումյանը, Սերգեյ Մովսիսյանն ու Վլադիմիր Հակոբյանը, որոնք վաստակել են 4,5-ական միավոր:

Հրանտ Մելքումյանը, որը մեկնարկում 3 անընդմեջ հաղթանակ էր տոնել, հաջորդ 3 տուրերում հաշտություն կնքեց Նիկիտա Վիտյուգովի, Ֆերենց Բերկեսի եւ Դմիտրի Անդրեյկինի հետ: Մելքումյանն ընթանում է 12-րդ տեղում:

11-րդ հորիզոնականն է զբաղեցնում Սերգեյ Մովսիսյանը: Նա վերջին 3 տուրերում 2 միավոր վաստակեց՝ հաղթելով ադրբեջանցի Ղադիր Ղադիրովին, ոչ-ոքի խաղալով չեխ Զբինեկ Հրաչեկի ու ավստրիացի Մարկուս Ռագերի հետ:

Վլադիմիր Հակոբյանը լրացուցիչ գործակիցները հաշվի առնելով, զբաղեցնում է 30-րդ հորիզոնականը: Նա 4-6-րդ տուրերում հաղթեց Վալերի Պոպովին ու Ալեքսանդր Շիմանովին, ոչ-ոքի խաղաց Ռոբերտ Հովհաննիսյանի հետ:

Շախմատիստների մեր եռյակն ընդամենը կես միավոր է զիջում աղյուսակը գլխավորող 10 առաջատարներին:

4-ական միավոր ունեն Գաբրիել Սարգսյանը, Տիգրան Պետրոսյանն ու Ռոբերտ Հովհաննիսյանը: Գաբրիելը նախ հաղթեց շվեդ Նիլս Գրանդելիուսին, ապա հաշտություն կնքեց Լեւան Պանցուլայայի եւ Թամաշ Բանուշի հետ: Պետրոսյանը միավորը կիսեց Բարտլոմեյ Հեբեռլայի ու Նամիգ Ղուլիեւի հետ, հաղթեց Վլադիմիր Ֆեդոսեեւին: Ռոբերտ Հովհաննիսյանը հաշտություն կնքեց Միխայիլ Կոբալիայի եւ Անդրեյ Վոլոկիտինի հետ:

3,5-ական միավոր են վաստակել Սամվել Տեր-Սահակյանը, Հովհաննես Գաբուզյանը եւ Զավեն Անդրեասյանը: Արման Փաշիկյանն ունի 2,5 միավոր, Վլադիմիր Պողոսյանի հաշվին գրանցված է 2 միավոր:

## Նալբանդյանը պարտվեց

Թենիսի Մայամիի մրցաշարի 2-րդ փուլում Դավիթ Նալբանդյանը 5-7, 3-6 հաշվով զիջեց սերբ Յանկո Տիպսարեւիչին ու դուրս մնաց հետագա պայքարից: Հաջորդ փուլ են մտել Նովակ Ջոկովիչը, Ռոջեր Ֆեդերերը, Թոմաշ Բերդիխը, Դավիթ Ֆեռերը:

## Չինական ակումբը հրավիրում է Ֆերդինանդին ու Լեմփարդին

Չինական «Գուանժոու Ռենե» ֆուտբոլային ակումբը պատրաստվում է ամռանը թիմ հրավիրել անգլիացի անվանի ֆուտբոլիստներ, «Մանչեսթեր Յունայթեդի» պաշտպան Ռիո Ֆերդինանդին եւ «Չելսիի» կիսապաշտպան Ֆրենկ Լեմփարդին: Ակումբը պատրաստ է նրանց ամսական 250 հազար ֆունտ ստեռլինգ վճարել: Ակումբի սեփականատեր Վանգ Գույլինը նշել է, որ հետեւում է այդ ֆուտբոլիստների ելույթներին ու համոզված է, որ նրանք կուժեղացնեն թիմի կազմը: Դրա համար նա պատրաստ է խոշոր գումարներ ծախսել նշված խաղացողներին թիմ հրավիրելու համար:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

**ԳՅՈՒՄՐԻ**

# Մեր լեզուն կարեւորելու հարցում նաեւ սովորենք ֆրանսիացիներից

## *Գյումրիում ֆրանկոֆոնիայի շաբաթն ավարտվեց*

Անցած շաբաթ օրը Գյումրի էին ժամանել Հայաստանում հավատարմագրված ֆրանսախոս երկրների դիվանագիտական կորպուսի եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ մասնակցելու այստեղ անցկացված ֆրանսախոսության շաբաթի փակման միջոցառումներին: Այդ առթիվ նրանց ընդունել է քաղաքապետ Վարդան Ղուկասյանը: Օրվա ընթացքում Գյումրու կենտրոնական գրադարանում կազմակերպվել է ֆրանսախոս երկրների մշակույթներն ու ավանդույթները ներկայացնող ցուցահանդես, բեմադրություններով ու պարերով հանդես են եկել քաղաքի երկու ավագ դպրոցների, «ԿԱՋԱ» շվեյցարական բարեգործական հիմնադրամի, «Ժան եւ Ալբեր Պողոսյաններ» արվեստի կենտրոնի սաները:

Գյումրին երկրորդ տարին է ընդգրկվում ֆրանսախոսության հայաստանյան միջոցառումներում: Այդ շրջանակներում մարտի 19-ից 24-ն ընկած օրերի ընթացքում Միքայել Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում կազմակերպվել է կոնֆերանս, ֆրանսերեն ներկայացումներ են բեմադրվել «Ընտանիք», «Տիրամայր Հայաստան կուսաստան» կենտրոններում, կինոդիտումներ՝ «Հոկտեմբեր» կինոթատրոնում եւ համերգ՝ շվեյցարական «Ալիոզ» խմբի կատարմամբ: Ու չնայած ֆրանսախոսության շաբաթը պաշտոնապես փակվել է, տարբեր միջոցառումները դեռ կշարունակվեն:

Ֆրանկոֆոնիայի միջոցառումները նպատակ ունեն զարկ տալ աշխարհում ֆրանսիական լեզվի, մշակույթի եւ ավանդույթների տարածմանը: Թերեւս մենք կարող ենք սովորել բարեկամ ֆրանսիացիներից՝ հազարամյակներից եկող մեր մայր լեզվի եւ ազգային դպրության նկատմամբ պաշտած վերաբերմունքը հենց Հայաստանի ներսում վերականգնելու համար...

**Գ. Մ.**

---

Հավելված N 1
ՀՀ Արդարադատության նախարարի
2011 թվականի դեկտեմբերի 1-ի
N 103-Ն հրամանի

«Հավելված N 1
ՀՀ արդարադատության նախարարի
2009 թվականի դեկտեմբերի 22-ի
N 319-Ն հրամանի»

**Ձև**

### ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի **«24» 02 2012թ.**
որոշմամբ

### ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**«Պրոմեթեյ Գիտություն Բարեգործական Հիմնադրամ**
**հիմնադրամի 2011թ. գործունեության մասին**

1. Հիմնադրամի լրիվ անվանումը՝ «**Պրոմեթեյ Գիտություն Բարեգործական Հիմնադրամ**»
1.1. Գրանցման համարը՝ **28616004372**
1.2. գրանցման ամսաթիվը՝ **01.11.2001թ.**
1.3. Գտնվելու վայրի հասցեն՝ **ք.Երևան, Հանրապետության 44/2**
1.4. Հեռ. **54-55-41**
1.5. Բջջ. **093-56-39-54**
1.6. Կայք
1.7 Էլ. փոստ
2. Հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարը՝
______________________________________________
Անուն, ազգանուն, հիմնադրամի միջոցներից օգտվելու ձևը, ստացված օգնության չափը (դրամային արտահայտությամբ)
3. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները՝
______________________________________________
Անուն, ազգանուն, հիմնադրամի միջոցներից օգտվելու ձևը, ստացված օգնության չափը (դրամային արտահայտությամբ)
4. Աշխատավարձը՝
______________________________________________
Անուն, ազգանուն, հիմնադրամի միջոցներից օգտվելու ձևը, ստացված օգնության չափը (դրամային արտահայտությամբ)

5. Իրականացված ծրագրերը՝ **ՀՀԳԱԱ Մաթեմատիկայի ինստիտուտ ֆին. օգնություն**

______________________________________________

1. **Կոնֆերանսի կազմակերպման համար**
2. **Օգնություն անապահով ուսանողների ուսման վարձը վճարելու համար**

Ծրագրի անվանումը, ծախսված գումարը
1. **Կոնֆերանսի կազմակերպման համար - 3 000 000 (երեք միլիոն) դրամ**
2. **Ուսման վարձ - 980 000 (ինը հարյուր ութսուն հազար) դրամ**

6. Ֆինանսական աղբյուրները՝ «**Պրոմեթեյ Բանկ» ՍՊԸ ֆինանսական աջակցություն**
______________________________________________
Անունը (անվանումը), ծրագրի անվանումը, չափը **- 12 000 000 (տասներկու միլիոն) դրամ**

7. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը՝
**12 034 000 (տասներկու միլիոն երեսունչորս հազար) ՀՀ դրամ**

7.1. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերը չափը՝
**3 980 000 (երեք միլիոն ինը հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ**

8. Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի
______________________________________________
Անուն, ազգանուն (անվանումը) **«Աուդիտ Սերվիս» Աուդիտորական Խորհրդատվական Ընկերություն տնօրեն Գոռ Դավթյան**

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2011 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Պրոմեթեյ-Գիտություն» բարեգործական հիմնադրամի ֆինանսական վիճակը, եւ նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքները եւ դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի (ՖՄԿ ՖՀՄՍ):

*«Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ի տնօրեն՝*
*որակավորված աուդիտոր*
*Գոռ Դավթյան*
*20.03.2012 թ.*

9. Հիմնադրամի տնօրեն — 9.1 Անուն, ազգանուն
10. Գլխավոր հաշվապահ — 10.1. Անուն, ազգանուն

---

*Հավելված N 1*
*ՀՀ արդարադատության նախարարի*
*2009 թվականի դեկտեմբերի 22-ի*
*N 319-Ն հրամանի*

**Հիմնադրամների կողմից հրապարակվող եւ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն ներկայացվող հաշվետվության**

### Հաշվետվություն

«Հայ-իտալական կրթամշակութային»
հիմնադրամի 2011 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի լրիվ անվանումը՝ «Հայ-իտալական կրթամշակութային» հիմնադրամ
2. Հիմնադրամը գրանցված է ՀՀ արդարադատության նախարարի «.....».......... թ. թիվ .... հրամանով պետական գրանցման վկայական՝ ........ եւ (կամ) Հիմնադրամը գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից «30» մարտ 2010 թ., պետական գրանցման վկայական՝ 03 Ա 086186:
3. Հիմնադրամի գտնվելու վայրը՝ ք. Երեւան, Սունդուկյան 9, բն, 28, հեռ.՝ 22 24 36
4. Հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարը
___________________________________`
անուն, ազգանուն, հիմնադրամի միջոցներից օգտվելու ձեւը, ստացած օգնության չափը (դրամական արտահայտությամբ)
5. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները՝
___________________________________`
անուն, ազգանուն, հիմնադրամի միջոցներից օգտվելու ձեւը, ստացած օգնության չափը (դրամական արտահայտությամբ)
6. Աշխատակազմը՝
___________________________________`
անուն, ազգանուն, հիմնադրամի միջոցներից օգտվելու ձեւը, ստացած օգնության չափը (դրամական արտահայտությամբ)
7. Իրականացված ծրագրերը՝
Կրթամշակութային
___________________________________`
8. Ֆինանսավորման աղբյուրները
Ֆինանսավորողի անունը (անվանումը), ծրագրի անվանումը, ֆինանսավորման չափը (դրամական արտահայտությամբ)
9. Ֆինանսական տարում օտագործված միջոցների ընդհանուր չափը ....................................:
10. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը՝
- կանոնադրական նպատակներին ուղղված
- վարչական ծախսեր
11. Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը:

***Տնօրեն՝ Լ. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ***

*Հաստատված Հիմնադրամի*
*հոգաբարձուների խորհրդի կողմից*

---

### Հայտարարություն

Սույն թվականի մարտի 30-ին, ժամը 10:30–ին Գորհայքի գյուղապետարանում տեղի կունենա «Գեոթիմ» ՓԲԸ-ի կողմից ՀՀ Վայոց ձորի և Սյունիքի մարզերի սահմանագլխին գտնվող ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման աշխատանքային նախագծի վերաբերյալ մասնագիտական եզրակացությունների, ազդակիր համայնքի ղեկավարների և համապատասխան պետական մարմինների կարծիքների հասարակական լսումներ: Նախագծային փաստաթղթերին կարելի է ծանոթանալ ք.Երևան Կոմիտաս 29 հասցեում: Հեռ. 22-14-85:

---

Երեւանի «Ադամանդ» Ապրանքա-Հումքային Բորսան իր հարթակում իրականացնում է «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից ներկայացված՝ Մասիսի եւ Թումանյանի շրջանների ԳՄԿ-ների, ԱՀԿ-ների, ինչպես նաեւ էներգահամակարգերի, տրանսմիսիաների, դետալների, սարքերի, սարքավորումների եւ այլ գույքի աճուրդային վաճառք:

Գույքի ամբողջ ցանկին ծանոթանալու, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել +(37410) 565228 կամ այցելել Բորսա՝ ք. Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցե, կամ **www.borsa.am**:

---

### ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

**Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2012 թվականի մարտի 15-ի թիվ 1 որոշմամբ**

**Ծածկագիրը՝ ՀԱԷԿ-ՊԸԱՊՁԲ - 6/12**

Պատվիրատուն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունը, որը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգ:

Պարզեցված ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել կայանի կարիքների համար թթվածնի և պրոպան գազի մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանում թթվածնի և պրոպան գազի մատակարարումը:

Գնումը ֆինանսավորելու է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 2012 թվականի ծախսերի նախահաշվով նախատեսված հատկացումների հաշվին և գնման ընդհանուր գինը չի կարող գերազանցել այդ գնումների ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը:

Կնքվելիք պայմանագրի կատարման ժամկետը պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 2012թ. հոկտեմբերի 01-ը ընկած ժամանակահատվածն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն պարզեցված ընթացակարգին մասնակցելու իրավունք ունեն բոլոր անձինք՝ անկախ նրանց օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Թղթային ձևով հրավեր ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին՝ ք. Մեծամոր, վարչական շենք հասցեով, մինչև սույն հայտարարությունը հրապարակելու օրվանից հաշված 10-րդ օրացուցային օրվա ժամը 12:00-ը: Պարզեցված ընթացակարգի հրավեր տրամադրելու համար պահանջվում է վճար 5000 ՀՀ դրամ գումարի չափով, որը պետք է փոխանցվի Կոնվերս բանկ դրամով վճարման դեպքում 1930000199200100 «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի հաշվեհամարին: Պատվիրատուն պարտավորվում է պահանջվող գումարի վճարված լինելը հավաստող բանկի կողմից տրված փաստաթղթի պատճենը ստանալու օրվա ընթացքում պարզեցված ընթացակարգի հրավերը տրամադրել պարզեցված ընթացակարգի հրավեր ստանալու պահանջ ներկայացրած անձին:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել պատվիրատուին՝ ք. Մեծամոր, վարչական շենք հասցեով,, մինչև սույն հայտարարությունը հրապարակելու օրվանից հաշված 10-րդ օրացուցային օրվա ժամը 12:00-ն և դրանք պետք է կազմված լինեն հայերեն լեզվով:

Մասնակիցների, մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների, հրավերով սահմանված պահանջներին համապատասխանությունը գնահատելու համար, Պատվիրատուին պետք է ներկայացվեն հրավերով նախատեսված փաստաթղթեր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն պայմանագիր կնքելու մասին որոշումը Պատվիրատուն հայտարարում է հայտարարությունը էլեկտրոնային ձևով ուղարկելով գնումների գործընթացի բոլոր մասնակիցներին:

Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ բաժնով սահմանված կարգով՝

1) գնումների բողոքարկման խորհրդին բողոքարկել պատվիրատուի և (կամ) գնահատող հանձնաժողովի որոշումները՝ պայմանագիր կնքելու մասին որոշմամբ սահմանված անգործության ժամկետում.

2) դատական կարգով բողոքարկել գնումների բողոքարկման խորհրդի, պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները:

Գնումների բողոքարկման խորհրդին բողոքարկելու դեպքում բողոքը ներկայացվում է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ՝ ք. Երևան, Կոմիտասի 54/բ հասցեով, գրավոր: Բողոքարկման վճարի չափը կազմում է երեսուն հազար ՀՀ դրամ, որը պետք է փոխանցվի «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի Հայէկոնոմբանկի Արաբկիրի մասնաճյուղում ունեցած 163058561289 հաշվեհամարին:

***«Հայկական ատոմային էլեկտրակայան»***
***փակ բաժնետիրական ընկերություն***

---

### ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

**Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2012 թվականի մարտի 15-ի թիվ 1 որոշմամբ**

**Ծածկագիրը՝ ՀԱԷԿ-ՊԸԱՇՁԲ - 13/12**

Պատվիրատուն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունը, որը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգ:

Պարզեցված ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել կայանի մեքենայական սրահի 14,7 նիշի մասնեբաժնի խողովակաշարերի ամբողջականության հաշվարկով նախատեսված ուժեղացումների ներդրման նախագծային-կոնստրուկտորական մշակումների աշխատանքների գնման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանում կայանի մեքենայական սրահի 14,7 նիշի մասնեբաժնի խողովակաշարերի ամբողջականության հաշվարկով նախատեսված ուժեղացումների ներդրման նախագծային-կոնստրուկտորական մշակումների աշխատանքների կատարումը:

Գնումը ֆինանսավորելու է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 2012 թվականի ծախսերի նախահաշվով նախատեսված հատկացումների հաշվին և գնման ընդհանուր գինը չի կարող գերազանցել այդ գնումների ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը:

Կնքվելիք պայմանագրի կատարման ժամկետը պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 2012թ. մայիսի 01-ը ընկած ժամանակահատվածն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն պարզեցված ընթացակարգին մասնակցելու իրավունք ունեն բոլոր անձինք՝ անկախ նրանց օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Թղթային ձևով հրավեր ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին՝ ք. Մեծամոր, վարչական շենք հասցեով, մինչև սույն հայտարարությունը հրապարակելու օրվանից հաշված 10-րդ օրացուցային օրվա ժամը 11:30-ը: Պարզեցված ընթացակարգի հրավեր տրամադրելու համար պահանջվում է վճար 5000 ՀՀ դրամ գումարի չափով, որը պետք է փոխանցվի Կոնվերս բանկ դրամով վճարման դեպքում 1930000199200100 «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի հաշվեհամարին: Պատվիրատուն պարտավորվում է պահանջվող գումարի վճարված լինելը հավաստող բանկի կողմից տրված փաստաթղթի պատճենը ստանալու օրվա ընթացքում պարզեցված ընթացակարգի հրավերը տրամադրել պարզեցված ընթացակարգի հրավեր ստանալու պահանջ ներկայացրած անձին:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել պատվիրատուին՝ ք. Մեծամոր, վարչական շենք հասցեով, մինչև սույն հայտարարությունը հրապարակելու օրվանից հաշված 10-րդ օրացուցային օրվա ժամը 11:30-ը և դրանք պետք է կազմված լինեն հայերեն լեզվով:

Մասնակիցների, մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների, հրավերով սահմանված պահանջներին համապատասխանությունը գնահատելու համար, Պատվիրատուին պետք է ներկայացվեն հրավերով նախատեսված փաստաթղթեր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն պայմանագիր կնքելու մասին որոշումը Պատվիրատուն հայտարարում է հայտարարությունը էլեկտրոնային ձևով ուղարկելով գնումների գործընթացի բոլոր մասնակիցներին:

Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ բաժնով սահմանված կարգով՝

1) գնումների բողոքարկման խորհրդին բողոքարկել պատվիրատուի և (կամ) գնահատող հանձնաժողովի որոշումները՝ պայմանագիր կնքելու մասին որոշմամբ սահմանված անգործության ժամկետում.

2) դատական կարգով բողոքարկել գնումների բողոքարկման խորհրդի, պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները:

Գնումների բողոքարկման խորհրդին բողոքարկելու դեպքում բողոքը ներկայացվում է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ՝ ք. Երևան, Կոմիտասի 54/բ հասցեով, գրավոր: Բողոքարկման վճարի չափը կազմում է երեսուն հազար ՀՀ դրամ, որը պետք է փոխանցվի «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի Հայէկոնոմբանկի Արաբկիրի մասնաճյուղում ունեցած 163058561289 հաշվեհամարին:

***«Հայկական ատոմային էլեկտրակայան»***
***փակ բաժնետիրական ընկերություն***

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 26.3.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: